№ 67 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 29 № 67

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Թերթիս աշխատակցելու են հայ գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ներկայացուցիչները։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գաւառական բեմերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար բազմաթիւ պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց, առանց դժուարութեան, ամեն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժանեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դօլլար։ Բաժանեգինը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ր. և ապա իւրաքանչիւր ամսի սկզբին մի րուբլի մինչև մայիս։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Պուտանեները» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեւսկայա № 3, ուր դիմելու են օտար քաղաքացիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

առ. 10—25

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

Յայտնում է պ. պ. տնատէրերին, որոնք Թիֆլիսի Քաղաքային Դումայի համար ձայնաւորներ ընտրելու ցենզն ունեն, որ մինչև 1907 թ. յունվարի 1-ը կուտակված գնահատման հարկի (оцѣночн. сб.) վճարման համար վերջնական ժամանակամիջոց նշանակված է, ընտրողական առաջին ռայօնին (1, 2, 3 և 4 քաղաքամասեր) մինչև գալիք ապրիլ ամսի 12-ի ցեր. ժամի 2-ը, երկրորդ ռայօնին (5, 6 և 7 քաղ.) նոյն ամսի 19-ի ցեր. ժամի 2-ը, իսկ երրորդ ռայօնին (8, 9 և 10 քաղաք.) ապրիլի 26-ի ցերեկ. ժամի 2-ը։ Այս ժամանակամիջոցները յայտարարելով, Քաղաքային Վարչութիւնը նախազգուշացնում է ընտրողական իրաւունքը իրանց համար թանգ համարող տնատէրերին, որ եթէ իրանց վրա եղած յիշեալ պարտքը մինչև նշանակված ժամանակամիջոցները չը թափեն, կը հանվեն ընտրողական վերջնական ցուցակներից, որոնք հրատարակվելու են 1907 թ. ապրիլի 13-ին, 20-ին եւ 27-ին։

առ. 2—3

Կօնցերտ Յ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Երկուշաբթի, ապրիլի 2-ին

ԱՐՏԻՍՏԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Տեղի կունենայ

Յօգուտ հայ ուսանողների

ԿՕՆՑԵՐՏ

հետեւեալ ծրագրով.

1) Սօնատա ջութակի և դաշնամուրի համար № 5—Բեթհօվէնի. կը կատարեն Յ. Նալբանդեան եւ Վ. Պօկրօվսկին։

2) ա. Էտիւդ—Լիստի, բ. Սերենադա—Ռախմանինովի, գ. Էտիւդ—Սկրեաբինի։

Կը կատարէ Վ. Պօկրօվսկին

3) Կօնցերտ ջութակի համար (1-ին անգամ) Գլազունովի։

Կը կատարէ Յ. Նալբանդեան

2-ՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

4) ա. Միլօդիա—Չայկօվսկու, բ. Գաւոտ—Տօր-Մուլէնի։

Կը կատարէ Յ. Նալբանդեան

5) ա. Նոկտյուրն—Րուբինշտէյնի, բ. Իսպանական կապրիչիօ—Մօշկօվսկու։

Կը կատարէ Վ. Պօկրօվսկին

6) ա. Նոկտյուրն—Շօպէնի, բ. Վենգերական պարեր—Բրամսի։

Կը կատարէ Յ. Նալբանդեան

(տ. օ.) առ. 2—5

Հայոց Հայրիկը Օշականում

Մեծադիր հիասքանչ գրաւիւր, պատրաստված Ֆրանկֆուրտում, գինը 1 ր. 50 կ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ 87-րդ մօտակայ տարեդարձի առիթով (ապրիլի 4-ին). վաճառվում է այսօրվանից ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ գրասենեակում, հատը 60 կ. մինչև ապրիլի 5-ը։

Հայ պարբերական բոլոր թերթերի բաժանորդների համար (եթէ ուղարկեն իրանց տպագրված հասցէները) ճանապարհածախսով և յատուկ պատրաստված այդ պատկերի համար խողովակներում—80 կ., նրանց համար, որոնք հայերէն ոչ մի թերթ չեն ստանում՝ 1 ր. 10 կ.։ Ապրիլի 5-ից անխտիր ամենքի համար դարձեալ իր նախկին գինով՝ հատը 1 ր. 50 կ. վերադիր վճարով չէ ուղարկվում։ Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ-Таразъ».

առ. (հ. շ.) 3—5

Ուրբաթ, մարտի 30-ին առաւօտեան ժամը 10-ին

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

„ՍԱՍՏԱՆԱՅ“

երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Դիմել՝ «Հայելի»-ի խմբագրատուն

(առ.) (հ. ու.) 1—2

Ծախվում է

ՔԱՂՑՐԱՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԿՈՄՊԼԵԿՏԸ

Մեխովիկ, 3 ցիլինդր, տիրաժներ, 2 ֆուրգօն, կուբ, շիշեր և այլն։ Հարցնել Ջավչավաձեւսկի փող. № 12, բակում, դռնապան Միխակին։ Ցերեկվայ 9—1 ժ. և երեկ. 3—5 ժամը։

առ. 1—3

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։ Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։

(տ. օ.) առ. 29—50

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշիւներից դուրս մնացածը. Պարսկական շարժումը. Վերջին տեղեկութիւններ. Իօլլօսի թաղումը. Մամուլ։ Նալբանդեանի կօնցերտը աշխատաւորների օգտին. Ըէակցիան կազմակերպվում է. Պրեմիէրը դիլեմմայի առաջ. Կառավարչական շրջաններում. Սենսացիօն լուրեր. Պետական բիւջետի քննութիւնը Դումայում. Իվանը—Մաշալի Մուհամմէդ Թատրոն և երաժշտութիւն։ Նոր դպրոցների մասին. Պետական Դումա. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ռուսիկական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նախիջեւանի վերջին դէպքերի առիթով։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեկտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ն. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի։

Մ. Գ. ԿԻՄՈՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Գ. Ա. ԲԵՏԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին օթեկներից։

առ. ե. հ. կ. 29—100

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասեւսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախօրդ յայտարարութեան համաձայն։

Երեխեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.

Ա. Ր. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ։

Ա. Դ. Բարսուկօվ.—չորեքշաբթի։

Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։

Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումրիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստում և այլն։

(հ. շ. և.) 22—50

ՀԱՇԻՒՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾԸ

I

Մենք բացատրեցինք այն հիմունքները, որոնց վրա յենված, կազմեցինք աղետեալ տեղերի այն անհրաժեշտ կարիքը, որը պէտք է պետութիւնը և հասարակութիւնը հոգան, որպէսզի կարելի լինի ազատովել հայ ժողովրդին սովից մինչև հունձը և հնարաւորութիւն տալով ցանել իր արտերը, վերականգնել քայքայված տնտեսութիւնը։

Մեր հաշուի մէջ չը մտան կործանված տների վերաշինութեան համար կարևոր ծախքերը. իսկ այդպիսի տների թիւը քիչ չէ և վերաշինութեան համար պահանջվող անհրաժեշտ ծախքերը աննշան չեն։

Արդարև, հայ-թիւրքական ընդհարումների շնորհիւ կործանվեցին ոչ միայն առանձին տներ այս ու այն շրջանում, այլ և ամբողջ գիւղեր իրանց բոլոր կայքով ու գոյքով։ Առանձին տները, ջրաղացները, գոմերը կարելի էր մոռանալ, բայց մենք գործ ունենք մասսայական աւերումների և հարիւրաւոր ու հազարաւոր տների հիմնայատակ լինելու։

Մենք նորից առաջ չենք բերի մանրամասն տեղեկութիւններ։ Նրանք արդէն արձանագրվել են մամուլի էջերում։

Մենք կը բաւականանանք ընդհանուր ցուցումներով, նպատակ ունենալով պարզել, թէ ինչպիսի կարիք ունի մեր ժողովուրդը իր տների վերականգնման համար։

II

Եթէ վերյիշենք այն գիւղերը, որոնք ենթարկվեցին աւերումների, կը տեսնենք, որ հայկական գիւղերում աւերվել են 1800—2000 գիւղական տներ։

Ներկայացնենք թւեր։ Բաղա գիւղում, որ բոլորովին կործանվել է, աւերվել է մօտ 400 տուն, կործանված Կրզան գիւղում 42 տուն. Գետաբէգի Ղազախլուում 40 տուն, Արէշի վառված 527 գիւղական ծխերից աւերված են իսպառ մօտ 200 տուն, Սարօվում և Ջիւանշիրի շրջակայ գիւղերում կործանվել են 450 տուն, Ղարադաղլու և Խօջալը գիւղերում աւելի քան 100 տուն, Զանգեզուրի, Մինքեանդ, Ալիղուլիբենդ, Հարար և միւս գիւղերում ոչ պակաս քան 350 տուն, Շարուրի Ուլիանորաշէն, Բէշապ և Նախիջեւանի գաւառի գիւղերում 380 տուն, և այլն։ Հէնց միայն այս թւերը ցոյց են տալիս, որ կործանված է 1962 տուն։

Եթէ ընդունենք միայն 1800 տուն և իւրաքանչիւր տան վերաշինութեան համար հաշւենք միջին թւով 150 րուբլի ծախք, կը տեսնենք, որ կործանված գիւղական տների շինութեան համար անհրաժեշտ է ունենալ 270,000 րուբլի գումար։

Մեր վերցրած միջին թիւը ամենևին բարձր չէ, որովհետև Ուլիանորաշէնի, Բաղայի, Սարօվի, և ուրիշ գիւղերի տուների կառուցումը պահանջում է գիւղացիներից յաճախ 200—500 և աւելի գումարներ։

III

Եթէ անցեալ անգամվայ առաջ բերած 1,304,990 րուբլի գումարին աւելացնենք այս 270,000 րուբլին, կը տեսնենք, որ հայ գիւղերի կարիքը նուազագոյն կերպով հաշուած համնում է 1,574,990 րուբլու։

Դա վերաբերում է միայն հայկական գիւղերին։

Թուրք գիւղերն էլ ունեցել են մեծ կորուստներ, որոնք թէև աւելի նուազ են, քան հայերինը, բայց և այնպէս շատ խոշոր մեծութիւն են կազմում։

Թուրքերը 1905 թւին համեմատաբար փոքր վնասներ էին ունեցել. բայց 1906 թւին նրանք սարսափելի կորուստներ ունեցան Զանգեզուրի շրջանում։ Մենք թէև ունենք հարևանցի տեղեկութիւններ թուրք գիւղերի կարիքների մասին, բայց զգուշանում ենք նրանց առաջ բերելուց, չը ցանկանալով առիթ տալ թիւրիմացութիւնների։ Ենթադրում ենք, որ թուրքերի վնասները կազմում են Գանձակի նահանգում մօտ 900,000 րուբլի։ Թուրքերի գիւղերից աւերի են ենթարկվել Ջիւանշիրի գաւառի ձմերոցները և Ղափանի շրջանում մի քանի գիւղեր։

Հայերի և թուրքերի ընդհանուր անհրաժեշտ կարիքը, յամենայն դէպս, պակաս չէ $2^1/_2$ միլիօն րուբլուց։

IV

Եթէ կառավարութիւնը կարողանար յատկացնել հայերի և թուրքերի կարիքների բաւարարութեան համար այդ 2 և կէս միլիօն րուբլին, կարելի էր յուսալ, որ տառապանքի ենթարկված այդ երկու ժողովուրդները կարող կը լինէին իրանց կազդուրել, իրանց տնտեսութիւնը վերականգնել, իրանց տները վերաշինել և ծայրահեղ կարօտութիւնից ազատվել։

Անշուշտ կործանված ու քայքայված տնտեսութիւնը մի անգամից չէ վերականգնվում և տարիներ են անհրաժեշտ, որպէսզի ժողովուրդը կարողանայ բուժել իր ստացած խոր խոցերը, բայց նա ստանալով բաւարար նպաստ, կարող է իր կազդուրման ճանապարհի վրա կանգնել և ինքն իր ոյժերով առաջ գնալ, առանց դիմելու այն խղճալի մուրացիկ վիճակին, որի մէջ նա գտնվում է ներկայումս։

Այս են այն խորհրդածութիւնները, որ մեր վերջին երեք յօդուածներով ներկայացնում ենք, երբև նիւթ, այն դիմումի առիթով, որ պէտք է անել կառավարութեան, խնդրելու դրամական աջակցութիւն։

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

V

Կարող է նախկին սադրազամ Աթաբէկը կառավարել Պարսկաստանը, եթէ կոչվի նոր մինիստրութիւն կազմելու, ինչպէս հաւանական է թւում։

Պէտք է ամենից առաջ հաստատենք այն փաստը, որ ներկայումս Պարսկաստանի բոլոր պետական գործիչների մէջ միակ կարողը, ձեռնհասը և փորձառուն—ի հարկէ յարաբերաբար—համարվում է Աթաբէկը, որ այժմ, երբև մի տեսակ աքսորեալ, ապրում է Եւրոպայում։ Նա միակն է, որ շատ մօտիկից ծանօթ է երկրի բոլոր հանգամանքներին, պայմաններին, որովհետև ամբողջ քսանհինգ տարի կառավարել է երկիրը։

Սակայն այժմեան մէջլիսը և մանաւանդ հոգեւորականութիւնը հակառակ է Աթաբէկին, որին համարում են գլխաւոր պատճառը Պարսկաստանի բոլոր աղէտների։ Ժողովուրդը չէ կարողանում ներել նրան, որ նա աշխատեցրեց ռուսական փոխառութիւնը և դրանով ենթարկեց երկիրը Ռուսաստանի տնտեսական և ֆինանսական ստրկացման։

Չը նայելով այդ ամենին, Աթաբէկի հմայքը, բարոյական հեղինակութիւնը, համբաւը այնքան մեծ է, որ նոյնիսկ նրա հակառակորդները ստիպված են խոստովանելու, թէ Աթաբէկը իր բնական, ինքնածին տաղանդով, խելքով, վարչական ընդունակութեամբ կարող է հանել երկիրը իր ներկայ քաօսական վիճակից և մէջլիսի հետ միասին համերաշխաբար գործել։

Թէ, արդարև, Աթաբէկը, համերաշխ կը գործէ մէջլիսի հետ, թէ նա հակառակ չի լինի, որ Պարսկաստանի մէջ մտցնվի սահմանադրական - պարլամենտական ռէժիմ և իր կողմից զարկ կը տայ այդ ռէժիմի զարգացման—այդ աւելի քան հաւանական է երևում։ Եւրոպական մամուլի մէջ այժմ տպվում են տեղեկութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ Աթաբէկը՝ վերջին 3—4 տարին գործ է դրել ճանապարհորդելու Եւրոպայի բոլոր երկրներում, գնացել է Ճապօնիա, Չինաստան, Ամերիկա, Աֆրիկա և մեծ ուշադրութեամբ քննել ու ուսումնասիրել է այդ երկրների կարգերը, վարչական, տնտեսական, ֆինանսական, առևտրական, կրթական, քաղաքական դրութիւնը։ Այդ ուսումնասիրութիւնը հասցրել է նրան այն համոզման, որ վարչական և պետական ամենալաւ ձևը—անգլիականն է և նա միակ յարմարն է Պարսկաստանի համար։

Եթէ, արդարև, այդ համոզմունքը, որ գոյացել է Աթաբէկի մէջ, երբև իր երկար ուսումնասիրութիւնների հետեւանք, անկեղծ է, այն ժամանակ, տարակոյս չը կայ, որ նա միայն բազմամեայ փորձառութեան, վարչական և պետական տաղանդի ու ընդունակութեան հետ, որոնցով օժտված է Աթաբէկը, կարող է մեծ գրաւական լինել, որ եթէ Աթաբէկը նորից կանչվի կառավարելու երկիրը, Պարսկաստանը կարողանայ մտնել վերածնութեան և վերաշինման շաւղի մէջ։

Եւ վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ պարսկական մէջլիսը ինքն էլ սկսում է գալ այն եզրակացութեան, որ ներկայումս միակ կարող և ձեռնհաս անձը՝ Աթաբէկն է։ Հաւանօրէն, նա կը կոչվի նորից սադրազամութեան և Պարսկաստանում կը սկսվի մի նոր ռէժիմի տիրապետութիւն։

Հ. Առաքելեան

ԻՕԼԼՕՍԻ ԹԱՂՈՒՄԸ

(Նամակ Մոսկվայից, մարտի 20-ին)

I

Անցեալ անգամ հաղորդել էի, որ սև հարիւրեակի կողմից սպանված Գրիգորի Բորիսովիչ Իօլլօսի թաղումը կը կայանայ ամսիս 19-ին։

Երէկ, վաղ առաւօտվանից, հասարակութեան ահագին բազմութիւն, որտեղ աչքի էին ընկնում ուսանողութիւնն ու ինտելլիգենցիան, շտապում էր դէպի կլինիկայի պատօլօգօ-անատօմիական ճեմարանը (патолого-анатомическій институтъ), որին կից գտնված մատուռի կողքի սենեակում գտնվում էր հանգուցեալի մարմինը։ Բոլոր ձիաքարշերն ու կառքերը, լցված հասարակութեամբ, շտապում էին այնտեղ, իրանց վերջին յարգանքը տալու Իօլլօսին։

Մարմինը պէտք է դուրս բերվէր ժամը 11-ին, բայց ի նկատի ունենալով, որ բազմաթիւ պսակները կառքերի վրա պէտք է դարսվէին, հետեւապէս, այդ ժամանակ էր պահանջվում, այդ պատճառով էլ մարմինը դուրս բերվեց միմիայն ժամը 11 և կէսին։ Զանազան թերթերի խմբագիրների, հիմնարկութիւնների և անձանց կողմից ուղարկած պսակների հետ եկած պատգամաւորները կամեցան պսակները ձեռքերի վրա տանել, բայց ոստիկանութիւնը թոյլ չը տուեց։ Դագաղը դուրս բերելուց անմիջապէս յետոյ, ուսանողութեան և մի խումբ յարգողների կողմից կազմվեցին երկու երկար շղթաներ, որի միջով անցնում էր յուղարկաւորութեան պրոցէսը, իսկ շղթաների երկու կողքերով հոծ բազմութիւն։ Այդ շղթաները 2—3 վերստ երկարութիւն ունէին։ Յուղարկաւորութիւնը պէտք է անցնէր Դորօգոմիլօվսկի կամուրջով, որը կարող էր փլչել, եթէ տասնեակ հազարաւոր ամբոխը միանգամից անցնէր. ի նկատի ունենալով այդ հանգամանքը, քաղաքապետ պ. Ռեյնբոտ կարգադրել էր ոստիկանութեան, որ վերջինս դագաղին ուղեկցող հասարակութեան բաց թողնի մաս-մաս՝ վերոյիշեալ կամուրջով անցնելու համար։ Բացի այդ, նա մի շարք կարգադրութիւններ էր արել, որպէսզի, որոշ կէտերում, որտեղով պէտք է անցնէր յուղարկաւորութեան պրոցէսը, ոստիկանական ուժեղ պահակներ կանգնեցնեն։ Թէ կլինիկայի առաջ, թէ Դորօգոմիլօվսկի կամուրջի մօտ, թէ հանգստարանում և թէ շատ փողոցներում, յատկապէս թաղման կարգը պահպանելու նպատակով, կային բազմաթիւ պրիստաւներ, թաղային հսկիչներ, հետևակ և ձիաւոր ոստիկաններ (конные городовые) և ժանդարմների մի ջոկատ, որոնց ընդհանուր թիւը 500-ից անց էր։ Անձամբ համոզվելու այն բանում, թէ իր կարգադրութիւնները ի կատար են ածվում, թէ ոչ, նա կառքով պտտում էր կէտերը և ամեն ինչ գտնում կանոնաւոր։ Յուղարկաւորութեան պրոցէսսի ամբողջ ընթացքում, կառքով, առաջից գնում էր ոստիկանապետ Ա. Իւբեվ։ Ճանապարհին հասարակութեան ցրվում էր հանգուցեալի բարեկամների և հարազատների կողմից մի թռուցիկ, որով խնդրում էին թաղման քայլերգ և յեղափոխական երգեր չերգել։ Այդ խնդիրը յարգվեց երիտասարդութեան կողմից։

Ամբողջ ժամանակ դագաղը տանում էին ուսանողները և «Русскія Вѣдомости» լրագրի տպարանի բանւորները։ Ինչպէս դագաղը, այնպէս էլ 3 կառք պսակները թաղված էին 25,000 հոգուց բաղկացած հասարակութեան ծով բազմութեան մէջ։ Յուղարկաւորութեան պրոցէսը, ժամը 2-ին, յամր քայլերով մօտենում էր Դորօգոմիլօվսկի հրէական գերեզմանատան, ուր խռնված էր հասարակութեան մեծ բազմութիւն և ուր շատերը իրանց համար նախօրօք տեղ էին բռնել գերեզմանի շուրջը։ Շատերը, որոնց թւում նաև հանգուցեալի բարեկամներից և «Русскія Вѣдомости» խմբագրութեան անդամներից մի քանիսը տեղի սղութեան պատճառով և ոստիկանութեան կարգադրութեամբ հանգստարանի դարպասները փակված լինելու շնորհիւ, չը կարողացան ներս մտնել և ներկայ լինել թաղման։ Այստեղ, թաղման ներկայ եղողների մէջ աչքի էին ընկնում Ա. Ա. Կիզեվետտեր, Ն. Մ. Իօրդանսկի, Ա. Ա. Բուլատ և Ե. Ա. Սայկօ (երկրորդ Պետական Դումայի պատգամաւորներ), իշխ. Ս. Դ. Ուրուսօվ, Ն. Ն. Լվօվ, Մ. Մ. Կօվալեվսկի, Ա. Ի. Լեդնիցկի, Վ. Ե. Եակուշկին, Պ. Ի. Նովգորօդցեվ, Ս. Ա. Կօտլեարեվսկի և Վ. Վ. Նեզօվօսկօվ (առաջին Պետ. Դում. պատգամաւորներ), Դ. Ն. Շիպօվ և Ա. Ա. Մանուիլօվ (Պետական Խորհրդի անդամներ, իսկ վերջինս նաև ռեկտոր Մոսկվայի համալսարանի), «Русскія Вѣдомости» թերթի խմբագրութեան անդամներն և հրատարակիչները, բոլոր առաջադիմական թերթերի ներկայացուցիչները, գիտական ընկերութիւնների, հասարակական հիմնարկութիւնների, մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցների պատգամաւորութիւններ, համալսարանի մի քանի պրոֆեսսորներ, ժողովր. ազատ. կուսակցութեան անդամները, ռայօնական կօմիտէտների ներկայացուցիչների հետ միասին, բազմաթիւ ուսանող-ուսանողուհիներ, յարգողներ և այլն։ Պէտք է շեշտել այն հանգամանքը, որ Իօլլօսի թաղումը գրաւել էր Մոսկվայի գիտակից և կրթված մասը, չը նայած որ եղանակը բաւական վատ էր (ամբողջ օրը ձիւն և անձրև էր գալիս)։

Բազմաթիւ պսակների մէջ աչքի էին ընկնում. 1) «Дорогому, незабвенному Г. Б. Іоллосу.»—«Русскія Вѣдомости» թերթից. 2) «Дорогому другу и товарищу».—Վ. Մ. Սօբօլեվսկուց. 3) «Талантливѣйшему публицисту, другу и товарищу».—«Русскія Вѣдомости» թերթի աշխատակիցներից. 4) Ժողովրդական ազատութեան կենտրոնական կօմիտէտից արծաթեայ պսակ. 5) «Павшему отъ руки врага народной свободы».—Նոյն կուսակցութեան Մոսկվայի կենտրոնական կօմիտէտից. 6) «Мирному борцу за проясненіе политическаго сознанія народа».—Նոյն կուսակցութեան մայրաքաղաքի կօմիտէտից. 7) «Достойному народному избраннику павшему, отъ враговъ свободы народа». — Նոյն կուսակ. պրեչ. ռայօնից. 8) «Благородному, неутомиму защитнику народныхъ правъ, свободѣ и культуры»—Նոյն կուսակ. մեշչ. ռայօնից. 9) «Іолосъ убитъ,—дѣло свободы не умретъ».—Նոյն կուսակ. Մոսկվայի նահանգական կօմիտէտից. 10) «Депутату первой Государственной Думы, павшему жертвой въ борьбѣ съ темными силами реакціи».—Մոսկվայի համալսարանի ուսանողութեան կողմից. 11) «Незабвенному сыну своего народа, проведной жертвѣ полеменной вражды».—հրէական գաղութի կողմից. 12) Свѣтлой жертвѣ темной силы». —Իւկ. Վ. Ա. Մօրօզովի կողմից. 13) Скорбящей редакціи «Паруса»—погибшему товарищу». 14) «Публицисту-гражданину». —«Русское Слово» թերթից։ Բացի սրանից պսակներ դրված էին «Новь», «Утро», «Рѣчь», «Русь», «Юж. Рѣчь», «Товарищъ», «Рус. Мысль», «Вѣстникъ Воспитанія», «Московскій Еженедѣльникъ», «Вечерная Заря», «Нижегородскій Листокъ» և «Слово» թերթերի, զանազան կրթական և հասարակական հիմնարկութիւնների ու մասնաւոր անձանց կողմից, բոլորը միասին 100-ից աւելի, որոնց մի առ մի յիշատակելը այստեղ մեզ շատ հեռուն կը տանի։ Յիշենք սակայն, որ ժողովրդական ազատութեան կուսակցութեան ռայօնական կօմիտէտները միայն 16 պսակ էին դրել։ Ուսանողութեան, Մոսկվայի երկաթուղային գծի և նահանգական դատարանի ծառայողների պսակները կարմիր ժապաւէնով էին։

Այսպէս, ժամի 2-ից քիչ անց էր, երբ խուռն բազմութեան հետ, բոլոր պսակներով, հասանք գերեզմանատուն, ուր խօսեցին ճառեր։

II

Բոլոր ճառերի թիւը 21 էր, որոնց բովանդակութիւնը համարեա թէ միանման էր։ Ճառերը տեւեցին 2 ժամից աւելի։ Հանգուցեալի հարազատներից ներկայ էին եղբայրն և մեծ որդին, որ աւարտել է Բեռլինի համալսարանը։ Թաղումը անցաւ առանց ինցիդենտի, եթէ չը հաշւենք գերեզմանատան մօտ ոստիկաններից մէկի արձակած գնդակը, որ առաջ է եկել, ինչպէս ադմինիստրացիան բացատրեց, անզգուշութիւնից։ Յուղարկաւորութեան ժամանակ հասարակութեան մէջ լուրեր էին պտտվում, որ մութ տարրերը արձակելու են ատրճանակներից։ Ես չէի հաւատում, հէնց այն պարզ պատճառով, որ նրանք ընդունակ չեն բաց հրապարակում, ճակատ առ ճակատ կռուելու իրանց թշնամու դէմ։ Իրանց «հերոսութիւնները» նրանք գործում են մութ տեղերից և անկիւններից։ Բարեբախտաբար ամեն ինչ լաւ անցաւ...

Մոռացայ ասել, որ ճառերից յետոյ Իօլլօսի դագաղը տարվեց գերեզման և հողին յանձնվեց։ Թարմ շիրիմը թաղվեց պսակների մէջ. շատերը արտասւում էին։ Ամբողջ հրէական գաղութը թաղման ներկայ էր...

Թաղման ծէսը վերջացաւ ուղիղ $5^1/_2$ ժամին, որից յետոյ հասարակութիւնը հանդարտ կերպով ցրվեց, տանելով իր հետ վսեմ իդէալներ, գեղեցիկ տպաւորութիւններ և անմոռանալի կենդանի յիշատակներ...

Հանգիստ բեղմնաւոր գործչին... Յարգանք նրա թարմ շիրմին... Կենդանի յիշատակ ազգերի բարեկամին... Յաւէրժ յիշատակ Իօլլօսին...

Ոսկու-Զօն

ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ջութակահար Յ. Նալբանդեանը միաց Թիֆլիսում, տալու մի կօնցերտ աղքատների օգտին։

Այդ համակրելի կօնցերտը տեղի կունենայ առաջիկայ երկուշաբթի օր, ապրիլի 2-ին։

Տաղանդաւոր ջութակահարի գեղեցիկ նուագածութիւնը, նպատակի վերին աստիճանի կարևոր լինելը, անկասկած, պէտք է գրաւեն մեր հասարակութեանը դէպի ապրիլի 2-ի կօնցերտը։

Այն կօնցերտները, որ տուեց Յ. Նալբանդեան Թիֆլիսում՝ երկու անգամ Երաժշտական դպրոցում, մէկ անգամ Հալաթարի թատրօնում և մէկ անգամ առաջին իգական գիմնազիայում, ցոյց տուին, որ Նալբանդեանը դարձել է Թիֆլիսի հասարակութեան սիրելին։

Թող ուրեմն այդ հասարակութիւնը այցելելով վերջին հրաժեշտի կօնցերտը, նպաստէ այն համակրելի և գեղեցիկ նպատակին, որի համար տրվում է կօնցերտը։

Կօնցերտի ծրագիրը զետեղված է մեր լրագրի յայտարարութիւններում։

ԲԻՒՐՈԿՐԱՏԻԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՒՈՒՄ Է

III

Հին բէժիմը հովանաւորում է արտօնեալ տարրերին։ Եւ միանգամայն բնական է, երբ գոյութեան կռւի ժամանակ կամ փորձութեան օրերում, այդ արտօնեալ տարրերը իրանց քաղաքական թէ սօցիալական շահերից դրդված ձեռք են մեկնում իրար, իրար մօտենում ու դաշնակցում սպառնացող վտանգի դէմ պաշտպանվելու համար։

Բիւրօկրատական կարգերի ու հայեացքների բովի մէջ սնված ու մարզված շահագործող տարրերի համար միակ ճանապարհը, արդարութեան ըմբռնումը և վերջնական գործելակերպը այդ է համարվում։

Այդ ճանապարհն է ընտրել ազնուականութիւնը և խոշոր բուրժուազիան։ Սակայն նրանցից բացի կայ մի ուրիշ արտօնեալ դասակարգ ևս—դա կղերականութիւնն է, որ դարերից ի վեր բռնակալների հետ սերտ համերաշխութիւն է պահպանում։ Բիւրօկրատական իերարխիայի վրա կանգնած այդ կաստաները ըմբռնելով իրանց գոյութեան խախտման իմաստը, փոխադարձ աջակցութեամբ ղեկավարել են ժողովրդական մասսաները, սովորեցրել նրանց և ծառայեցրել իրանց անձնական շահերին ու նպատակներին։

Նոյնն է նկատվում այսօր ևս։

Անցան հին օրերը. ժողովուրդը արդէն կանգնել է գիտակցութեան այն մակերևոյթի վրա, որ այլևս թոյլ չէ տալիս շահագործել իրան և ձգտում է վերականգնել իր քաղաքացիական տարրական իրաւունքները։

Այդտեղից է սկիզբն առնում արտօնեալների ու շահագործողների և ժողովրդի ու շահագործվողների պայքարը։

Եւ ահա իր այդ տարրական իրաւունքների ու ազատագրութեան համար կռիւ մղող ժողովրդական մասսաների դէմ կանգնած արտօնեալների ու շահագործողների շարքում այսօր տեսնում ենք կղերական բիւրօկրատիային։ Օբեր-պրօկուրօր Պոբեդօնօսցեվը կէս դար շարունակ կրօնն ու հոգևորականութիւնը դարձրել էր գործիք բիւրօկրատական նպատակների ու աւանտիւրաների համար։ Եւ պետական այդ «իմաստուն» քաղաքականութիւնը, կրթական այդ սիստեմը շարունակվում է այսօր էլ։ Թէև չը կայ այլևս Պոբեդօնօսցեվը, բայց ուղղափառ կղերը ինքնիշխանական ոյժով շարունակում է իր այդ ուղղութիւնը, իր ինկվիզիտօրական գործելակերպը։ Ժողովրդական շարժման համաձայն, ազատամիտ հոգևորականները հալածանքի են ենթարկվում. առաջին Դումայի պատգամաւոր քահանաներ Օգնեն ու Աֆանասիեվը արդէն կարգալոյծ են եղել, Պետրով քահանան տառապում է աքսորավայրում, այժմ էլ հերթը հասնում է ներկայ Պետական Դումայի անդամ Տիխվինսկի քահանային, որ ամբիոնի վրայից խօսում էր զինուորա-դաշտային դատարանների դէմ քրիստոնէական սկզբունքի տեսակէտից։ Նա իր այդ մարդասէր, հակաբիւրօկրատական քարոզի համար սինօդ է կանչվելու բացատրութեան համար և, երևի, առաջարկութիւն կը ստանայ լռելու։

Մի ուրիշ տեղ Կուրսկ քաղաքի Լօժակին քահանան, որ մեծ ժողովրդականութիւն է վայելում և սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ազատ գաղափարների քարոզիչներից մէկն է, այսօր «իսկական ռուս» խուլիգանների բողոքի համաձայն հալածանքի է ենթարկվում։

Եւ ով գիտէ, բիւրօկրատական ինկվիզիցիայի վերջին զոհն է լինելու նա…

IV

Ռուս բիւրօկրատիան, ճակատ առ ճակատ Դումայի դէմ դուրս գալու, հակասահմանադրական ակտ կատարելու ամենևին կարիք չունի։ Ստոլիպինը մնալով «սահմանադրական» ոչինչ չէ կորցնում. նա միշտ էլ հնարաւորութիւն ունի իրերի դրութիւնը յեղաշրջելու առանց բացարձակ կռիւ յայտարարելու։

Եւ մարդ-բորենիների այդ ամբողջ վոհմակը հէնց այժմից արդէն ականներ է դնում Դումայի տակ, և զուեր լարում ժողովրդական ներկայացուցիչների դէմ. զանազան քաղաքներից խնդիրքներ են տեղում, «պատրիոտների» բաժանմունքները բարձրագոյն հեռագիրներ են ուղարկում, այդ «կրամոլայի» բոյն Դուման ցրելու համար։ Այն ժամանակ երբ Դումայի ներսում Պուրիշկևիչ-Կրուշևան - Բոբրինսկիները խուլիգանական վերաբերմունք են ցոյց տալիս թէ դէպի Դուման և թէ ժողովրդի ներկայացուցիչները, ծաղրելով ու անուանարկելով տառապողների դատը, դրսում, երկրի մէջ, նրանց արբանեակները պատրաստութիւններ են տեսնում ինտելլիգենցիայի ու հրէական ջարդ սկսելու համար։ Կաուլբարսի հովանաւորութեան տակ Օդեսսան «ռուս հայրենասէր» հօրդաների տրամադրութեան խաղալիք է դարձել. կոմս Կօնօվիցին բաւական չը համարելով բանուոր ագիտացիան ու պրօվօկացիաները, ջարդարարական կոչեր է տպագրել տալիս մամուլի էջերում. Պուրիշկևիչ-Կրասկօվսկին և Պօլօֆևը Պետերբուրգում, Գրինգմուտն ու Օլովեննիկովը Մոսկվայում իրանց «Моск. Вѣд.», «Руск Знамя» և «Вѣче» օրգաններով, Իլլիոդոր վարդապետի և Անտոն եպիսկոպոսի օրհնութեամբ ու ղեկավարութեամբ կազմակերպում են իրանց դաւադրի բանակը, լիայոյս, որ երկդիմի բիւրօկրատիան վերջապէս հարկադրված կը լինի անձնատուր լինել իրանց պահանջների առաջ և ցրել Դուման։

Նրանք անհամբեր սպասում են այդ օրին։

Բայց Դուման չէ ուզում շեղվել օրինականութեան ու սահմանադրութեան շաւղից. նա գործում է մեծ զգուշութեամբ և չէ ենթարկվում պրօվօկացիայի։ Իսկական «պատրիօտների» համբերութիւնը հատել է արդէն և նրանք դիմում են բացարձակ պահանջով— «ցրեցէք Դուման»։

Այդ քայլից յետոյ, նրանք հրաւէր են կարդում «իսկական» ռուսներին պատրաստվելու, թշնամուն դիմաւորելու համար. իսկ այդ թշնամին արձակված Դումայի պատգամաւորներն են, որոնք վերադառնալով իրանց տեղերը, ժողովրդական մասսաները պէտք է գրգռեն կառավարութեան դէմ։ Ահա դրանց դէմ է կոչ անում Օդեսսայի «պատրիօտների» հրամանատար կոմս Կօնօվիցինը. «Ռուս մարդիկ, ուղղափառ մարդիկ, միացէք շուտով, պատրաստվեցէք, թշնամին արդէն մօտ է. նա քնած չէ, այլ պատ է մտել,—պատրաստվեցէք, թող նա իր յանկարծակի յարձակումով մեզ չը շուարեցնի. մենք թոյլ չը տանք, որ Ռուսաստանը խայտառակութեան մատնվի»։

Այդպիսի կոչով է դիմում նա ռուս ժողովրդին։ Դրա աղդանշանը հէնց այն խորհրդաւոր նշանն էր, որով զարդարվեց «Русск. Знамя»-ի ճակատը։

Ռուսաց նորատի ժողովրդական ներկայացուցչութիւնը—Դուման, լուռ գործում է այդ չարագուշակ փոթորիկների առաջ, որոնց սանձողն էլ է բիւրօկրատիան, խրախուսողն էլ։ Ժողովրդական օպպօզիցիօն ոյժերի դէմ բիւրօկրատիան անցեալ տարվայ նման այլևս մենակ չէ կանգնած. նա արդէն ապաւինել է մնալ իր միացեալ ոյժերով, որ հիմնվում է կազմակերպված ըէակցիօն տարրերի դաշնակցութեան վրա։ Ազնուականութիւնը, խոշոր բուրժուազիան, կղերը, ռուս «պատրիօտները»,—ահա այն տարրերը, որոնց օգնութեամբ նա ուզում է կանգնեցնել ժողովրդական շարժումը։

Անաւեղ՝ յոյսեր։

Լ. Դանիէլեան

ՊՐԵՄԻԵՐԸ ԴՈՒՄԱՅԻ ԱՌԱՋ

Պ. Լ. Լվովի պատմելով, կառավարչական բարձր շրջաններում չեն դադարում շարունակ Դումայի ցրելու մասին մտածել։ Նրանք ամսիս 17-ին արտակարգ ժողով են գումարել յատկապէս նորից այդ հարցը քննութեան առնելու համար։ Այդ ժողովին մասնակցել է և ինքը Ստոլիպինը, որ՝ ներկայումս Դումայի ցրելու սաստիկ հակառակ է։ Ժողովականների մեծ մասը նրա կարծիքին է միացել, գտնելով, որ դեռ ևս շատ վաղ է այդպիսի մի քայլ անելու։ Պրեմիերը շատ եռանդուն կերպով ապացուցել է, որ ներկայ բօպէում դեռ ևս ոչ մի հիմք չը կայ Դումայի ցրելու համար, որովհետև նա դեռ ոչ մի այնպիսի առիթ չէ տուել, որպէսզի նրանից դժգոհ լինեն։ Այն հանգամանքը, որ մի քանի պատգամաւորներ խիստ ճառեր են արտասանում Դումայում և չափաւորութիւնից դուրս պահանջներ են դնում, Ստոլիպինի կարծիքով, դեռ ևս չեն կարող լուրջ պատճառ համարվել այնպիսի մի վճռական քայլ անելու։ Ինչպիսին է Դումայի ցրելը։ «Պէտք է պատգամաւորների մեծամասնութեան կողմից ընդունված որոշումներին գլխաւորապէս նշանակութիւն տալ,—ասել է Ստոլիպինը,—այլ ոչ թէ այս կամ այն պատգամաւորի ճառին կամ դրած խիստ պահանջներին։ Իսկ այդ տեսակէտից դեռ ևս ոչ մի հիմք չը կայ ասելու, թէ անհնարին է Դումայի հետ համաձայնութեան գալ ու նրա հետ համերաշխութեամբ աշխատել։ Կառավարութեան ու պատգամաւորների միջև տարաձայնութիւններ և վիճաբանութիւններ լինում են բոլոր պարլամենտներում. դա անխուսափելի է։ Եւ այդ, ի հարկէ, տանելի կարող է լինել մինչ այն ժամանակ, քանի որ պատգամաւորների մեծամասնութիւնը կենտրոնում կը մնայ»։

Ցետոյ պրեմիերը վստահութիւն է յայտնել իր կողմից այն մասին, թէ ներկայ Դումայում մեծամասնութիւնը «բաւականաչափ խելօք» կը գտնվի, որպէսզի դուրս չը գայ պատշաճութեան շրջանակներից ու չը ստիպի կառավարութեանը Դուման ցրելու միջոցին դիմել։

Թէև «շրջանի» մարդկանցից մի քանիսը շարունակ պնդել են, թէ Դուման հետզհետէ «յեղափոխականների ժողով» է դառնում, բայց և այնպէս մեծամասնութիւնը միացել է Ստոլիպինի կարծիքին։

«Ինչպէս երևում է,—ասում է իր կողմից պ. Լվովը,—հիմա Ստոլիպինը օրէցօր աւելի ու աւելի մեծ նշանակութիւն ու ազդեցութիւն է ձեռք բերում շրջաններում, ուր ըս կրսում են համոզվել, որ նրան պիտի աջողվի իր կողմը գրաւել Դումայի մեծամասնութիւնը, ինչպէս որ ինքը ասել էր այդ մասին դեռ Դումայի բացվելուց առաջ։

«Թէև նրա՝ Դումայում արտասանած ճառերի «միտինգային բնաւորութիւն» ունենալու համար ծագած դժգոհութիւնը դեռ ևս բոլորովին չէ անցել «շրջաններում», այնուամենայնիւ պրեմիերի դիրքը գնալով աւելի ու աւելի է ամրանում»։

Ստոլիպինի դիրքի ամրանալուն, անշուշտ, պիտի նպաստէ և այն հանգամանքը, որ «իսկական ռուս մարդկանց» անունը կրող սև հարիւրակային կուսակցութիւնը, քանի գնում, այնչափ աւելի յանդուգն է դառնում իր խուլիգանական քաղաքականութեան մէջ։ Կառավարութեան ամեն մի փոքր ի շատէ մերձեցումը Դումայի մեծամասնութեան հետ, այդ կուսակցութեան բարկութիւնն ու գայրոյթն է շարժում։ Թէև ամեն կողմից սև հարիւրակային մարմինները շարունակ շնորհակալական հեռագիրներ ու ներբողներ են ուղարկում մինիստրական կաբինետի նախագահին, բայց այդ բոլորը լոկ այն նպատակը ունեն, որ խրախուսեն ու դրդեն պրեմիերին աւելի համարձակ լինել ու չը վարանել շուտով Դուման ցրելու։ Նրանք բոլորովին չեն ցանկանում, որ Դուման երկար տեողականութիւն ունենայ. նրանց երազն է, որ Դուման շուտով արձակվի և ապա coup d'état կատարվի, այն է, որ ոչնչացվեն միանգամից այն բոլոր մանիֆեստներն ու ազատութիւնները, որ ձեռք են բերված այս վերջին երկու տարիների ընթացքում, ու վերադառնալ նորից հին բէժիմին։

Հարցը նրա մէջ չէ, ի հարկէ, թէ որչափ իրագործելի են այդ բոլորը, այլ իրողութիւնն այն է, որ սև հարիւրակային կուսակցութիւնը վերջին օրերում մի կատաղի խաչակրաց արշաւանք է սկսել Դումայի դէմ։ Ինչպէս պատմում են, այդ կուսակցութեան օրգան «Русск. Знамя» թերթում վերջերս, Իօլօսի սպանութիւնից յետոյ, մի սև խաչ է նկարված եղել։ Եւ դա, մի աղդանշան է եղել բոլոր տեղերում գտնված սև հարիւրակների համար, որ նրանք իրանց յարձակումը սկսեն Դումայի դէմ թէ «խոնարհ հպատակութիւն» յայտնող հեռագիրներով և թէ այլ բոլոր ներելի ու աններելի միջոցներով։

Եւ այդ՝ «քաղաքական կուսակցութիւն» անունը կրող՝ մարդասպանների ու աւազակների խմբակցութիւնը «գործում է», գործում է մեծ եռանդով և ամենայանդուգն եղանակներով։

Իսկ «շրջաններում», և կառավարութիւնը, ի հարկէ, տեսնում են այդ գործունէութիւնը, և, անշուշտ, չեն կարող չը հասկանալ, թէ ուր կը հասցնեն Ռուսաստանին խուլիգանական այդ ձգտումները։ Չենք կարող ենթադրել, որ կառավարչական մարմինները այն աստիճան տգէտ լինեն, որ չը կարողանան հասկանալ, թէ ժողովրդի տականքները վստահելի նեցուկ չեն կարող հանդիսանալ կառավարութեան համար, և թէ կարելի պիտի լինի, նրանց վրա կռթնելով, երկիրը ազատել այն փոթորկալից դրութիւնից, որի մէջ նա գտնվում է վերջին երկու տարիների ընթացքում։ Կառավարչական մարմինները շատ լաւ պիտի հասկանան, որ իրանց նեցուկ ընտրելով խուլիգանական տարրերին ու նրանց հետ ձեռք ձեռքի տուած ընթանալով, Ռուսաստանը այնպիսի անդունդի մէջ կը գլորեն ու այնպիսի անիշխանութեան կը մատնեն, որ ամենից առաջ և ամենամեծ տուժողները հէնց իրանք՝ «շրջանները» կը լինեն։

Կրկնում ենք, եթէ այս բոլորը հասկանան «շրջաններում», եթէ նրանք ըմբռնեն այն սոսկալի վտանգաւոր ուղին, որի մէջ ցանկանում են գցել կառավարութեանը «իսկական ռուս մարդիկ», այն ժամանակ նրանք այնպիսի թեթևութեամբ չեն վերաբերվի Դուման ցրելու հարցին։

Ինչպէս երևում է, կառավարութիւնը մինչև ճանապարհի վրա շատ քիչ կողմնակիցներ ունի, նա կամ պիտի «հրաժարիմք» տալ սև հարիւրակներին և, անկեղծութեամբ վերաբերվելով իր արած խոստումներին, մի շարք էական զիջումներ անէ Դումային, և կամ, բացարձակ կերպով գրկախառնվելով «իսկական ռուսների» հետ, Դումայի ցրելը շտապեցնէ ու գնայ նրանց ցոյց տուած վտանգաւոր ուղիով։

Սակայն, ով գիտէ, գուցէ, թէ «Русск. Знам.»-ի մէջ երևացած սև խաչը և թէ խուլիգանների խաչակրաց արշաւանքը շինովի բաներն են, որպէսզի Դուման ցրելու վախով պատգամաւորներին աւելի զիջող դարձնեն. մեր բիւրօկրատիայից ամեն բան կարելի է սպասել։

Ռ.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

III

«Մշակի» երեկվայ համարում տպագրված «Ուշագրաւ փաստաթուղթ»-ը պարզապէս ցոյց է տալիս, որ Դուման արձակելու համար եռանդուն ագիտացիա է մղվում։ Սև-հարիւրակայինների ագիտացիան անպայման սերտ կապ ունի այն ագիտացիայի հետ, որ մղում են կառավարչական բարձր շրջաններում նոր կարգերի ու ազատութեան կատաղի թշնամի բիւրօկրատները։ Դրա արդիւնքը եղել է այն, որ մօտ օրերս բարձրաստիճան պաշտօնեաները արտակարգ նիստ են գումարել խորհրդակցելու այդ հարցի մասին. ի հարկէ, նիստին հրաւիրված է եղել և մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը։

Դումայի հակառակորդները յայտնել են, որ Դուման հետզհետէ դառնում է միտինգ, յեղափոխականների ժողով, այդ պատճառով անհրաժեշտ է արձակել։

Սակայն հին բէժիմի ֆավորիտների այդ յարձակումները աջողութիւն չեն ունեցել։ Մեծամասնութիւնը ընդդիմացել է այդ առաջարկին, Դումայի արձակումը առայժմ վաղաժամ համարելով։ Ինչպէս լրագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, Ստոլիպինը այդ նիստում եռանդով ապացուցել է, որ ոչ մի հիմք չը կայ Դուման արձակելու և նոյն իսկ առիթ էլ չը կայ դժգոհ մնալու նրանից։

Դումայի մի քանի անդամների ծայրահեղ ու խիստ ճառերը առանձին կարևորութիւն չունեն և լոկ դրա համար չարժէ դիմել այնպիսի վտանգաւոր միջոցի, ինչպիսին է Դուման արձակելը։ Ընդհակառակը նշանակութիւն ունի Դումայի մեծամասնութեան բռնած դիրքը, որի հետ կառավարութիւնը սակայն գտնում է, որ հնարաւոր է աշխատել։

Իրաւ է, երբեմն տարաձայնութիւններ են պատահում Դումայի ու կառավարութեան միջև վիճաբանութիւնների ժամանակ, բայց դա անխուսափելի է բոլոր պարլամենտներում, որը լինելով ժողովրդական ներկայացուցչութիւն, բաղկացած է լինում ամեն տեսակ կարծիքներ ունեցող ներկայացուցիչներից։

Պրեմիերը յոյս է յայտնել, որ Դումայի մեծամասնութիւնը առաջիկայում էլ կը գործի խոհեմութեամբ ու մեծ զգուշութեամբ, առանց հետևելու ծայրահեղներին, առանց դուրս գալու օրինական շրջանակներից, ապա ուրեմն առիթ էլ չի տայ արձակելու։

Ստոլիպինի արտայայտած այդ կարծիքը մեծամասնութեան կողմից հաւանութիւն է գտել։ Վերջիններս հաւատացած են, որ Ստոլիպինը կարող կը լինի Դումայի մեծամասնութիւնը իր կողմը գրաւել, ինչպէս որ այդ խոստանում էր Ստոլիպինը Դումայի բացումից առաջ։

Այդ խորհրդակցութիւնը մի կողմից հաստատեց պարզապէս, որ Ստոլիպինը սկսում է կրկին մեծ համարում ստանալ բարձրաստիճան անձանց մեծամասնութեան աչքում, իսկ միւս կողմից՝ որ Դումայի վերաբերմամբ նպաստաւոր տրամադրութիւն է նկատվում։

Սակայն, առհասարակ նկատված է, որ շրջանների տրամադրութեան վրա շատ էլ յոյս չը պէտք է տածել. նրանք փոփոխական են։

IV

Վերջին օրերս նպաստաւոր փոփոխութիւն է նկատվում կառավարչական շրջաններում Դումայի վերաբերմամբ։

Այդ վկայութիւնը գալիս է լրագրական աղբիւրներից, սակայն կան հեռագրական մասնաւոր աղբիւրներ մեզանում, որոնց եթէ հաւատալու լինենք՝ Դուման այժմ արձակված պէտք է համարել։ Բարեբախտաբար այդ աղբիւրները թէև սենսացիօն, բայց շատ անգամ անստոյգ են և տենդենցիօզ։ Այդ պատճառով այդպիսի աղբիւրներին պէտք է մօտենալ մեծ զգուշութեամբ։

Այդպիսի քաոսական տեղեկութիւնները բաղդատելով իրար հետ, ընթերցողը ակամայ պէտք է իրան հարց տայ՝ «որին հաւատալ. որն է սուտ և որը ուղիղ»։

Իրաւունք էլ ունի։

Բայց ինչ արած, որ այդ հակասական տեղեկութիւնները արդիւնք են բարձր շրջանների տրամադրութեան փոփոխականութեան։ Զանազան սենսացիօն տեղեկութիւնների ու դաւադրական շշուկների միակ աղբիւրը հէնց այդ տրամադրութիւններն են։

Օտար մայրաքաղաքի լուրջ օրգանների հաղորդած տեղեկութիւնները այդ շրջանների տրամադրութեան մասին, համարեա, միանգամայն են։ Նրանք միաբերան վկայում են, որ այդ շրջաններում ներկայումս նպաստաւոր տրամադրութիւն է նկատվում Դումայի վերաբերմամբ, որ նոյնիսկ նրան ցրելու համար տարածված լուրերը, համարեա, այլ ևս չեն լսվում։ Ընդհակառակը բիւրօկրատական շրջաններում այժմ խօսում են, որ Դումայի կենտրոնի, գլխաւորապէս սահմանադիր ռամկավարների բռնած դիրքը ագրարական և բիւջետական օրինագծերի վերաբերմամբ լաւ տպաւորութիւն է թողել։ Նրանք տեսնում են, որ այդ խմբակը ընտրել է իր համար որոշ ճանապարհ և անշեղ կերպով ձգտում է ապահովել ժողովրդի բարեկեցութիւնը, միաժամանակ սանձահարելով ծայրահեղ տարրերի թռիչքները։

Ասում են, որ այդ շրջանները առաջարկել են կառավարութեանը մեծ զգուշութիւն պահպանել և խուսափել անտեղի ու վաղաժամ կօնֆլիկտից։

Բնորոշ երևոյթ է նկատվում և բիւրօկրատական շրջաններում. նրանք համոզված են, որ առաջիկայ շաբաթվայ ընթացքում կը վճռվի Դումայի բաղդը. միաձայն յոյս են յայտնում, որ կաջողվի Դումայի և կառավարութեան միջև խաղաղ յարաբերութիւններ սահմանել, միասին աշխատելու համար։ Դրա համար, ինչպէս խօսում են Պետերբուրգի դիպլօմատիական շրջաններում, մեծ ջանք է գործ դնում ինքը պրեմիեր Ստոլիպինը, որի կաբինետի ճակատագիրը սերտ կապ ունի Դումայի գոյութեան հետ։

Համախմբելով այդ բոլոր տեղեկութիւնները, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ Ստոլիպինը հակառակում է Դուման արձակելու առաջարկներին, գոնէ ներկայումս և իր այդ ջանքերի մէջ նա բարձր շրջանների մեծամասնութեան կողմից պաշտպանութիւն է գտնում։ Հակառակ դէպքում, եթէ Դումայի արձակման ծրագիրը յաղթանակելու լինի, Ստոլիպինը կը զրկվի պրեմիերի բարձր պաշտօնից։

Այդ կարծիքը յայտնել է Ստոլիպինը ինքը ևս, և այն էլ արտասահմանեան «Temps» լրագրի թղթակցին։ Նոյնանման մի բան էլ նա ասել է և Բեռլինեան «Lok. Anz.» լրագրի թղթակցին։

Արտասահմանեան լրագրների թղթակիցների հետ յաճախակի զրոյցներ ունենալու հիւանդութիւն ունի Ստոլիպինը, այնպէս որ եթէ աղբիւրները միայն նրանք լինէին, հարկաւոր կը լինէր կասկածել։ Բայց երբ խօսում են և դիպլօմատիական լաւատեղեակ շրջաններում, այն ժամանակ պէտք է և հաւատալ։

Առ այժմ հաւատանք դրանց։

T

ՍԵՆՍԱՑԻՈՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս երևում է սև-հարիւրակայինների դաւադրութիւնը անաջողութեան հանդիպեց։ «Рус. Знамя» լրագրի տուած աղդանշանը ոչ մի ազդեցութիւն չը գործեց, չը նայելով Պուրիշկևիչի յայտնի շրջաբերականին։ «Рѣчь» լրագիրը տպագրում է մի շարք նոր մերկացումներ «ռուս ժողովրդի միութեան» դէմ Իօլօսի սպանութեան առիթով։ Նա, ի միջի այլոց, հաղորդում է, որ սահմանում կալանաւորված է ֆէլշեր Սմիրնովը, որին վարձել էին կադետների կուսակցութեան մի քանի լիդերներին սպանելու համար։ Այդ այն Սմիրնովն է, որի մասին այնքան գովասանքներ էր շռայլում «Рус. Знамя» օրգանը։

—Ոստիկանութիւնը շարունակում է բացատրել պատգամաւորներին, թէ ինչպէս պէտք է հասկանալ անձի անձեռնմխելիութիւնը. Պետական Դումայի անդամ Բուլատի բնակարանը խուզարկութեան են ենթարկել իր բացակայութեան ժամանակ։ Պատգամաւոր Պետրովսկու «կօզակների մասին» գրած յօդուածի պատճառով փակված է «Думскій Листокъ» կադետների օրգանը։

—Կրուշևանի առաջարկութեամբ «ռուս ժողովրդի միութեան» կենտրոնական կօմիտէտը հեռագրով պահանջել է արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովից Հերցենշտէյնի սպանութեան պատճառով ձերբակալվողների գործը յանձնել ռուսական դատարանին, որովհետև ֆինլանդացիները Ռուսաստանի թշնամիներ են։

—Սեմենովսկի գնդի օֆիցերները շաբաթական մի օր ճաշկերոյթներ են տալիս, որտեղ միաժամանակ զրուցում են, քաղաքական խնդիրների մասին Կրուշևանի, Պուրիշկևիչի և «Нов. Вр.»-ի աշխատակից Մենշիկովի բարեհաճ մասնակցութեամբ։

—Ոստիկանական դեպարտամենտի մէջ մեծ իրարանցում են առաջ բերել արտասահմանեան թերթերի հաղորդած տեղեկութիւնները Չերնեակինի խորհրդաւոր սպանութեան առիթով, որոնք փաստաթղթերի վրա հիմնվելով պարզում են, որ այդ սպանութեանը մեղսակից են ռուսաց կառավարչական մի քանի բարձրաստիճան անձինք։ Ոստիկանական դեպարտամենտը այժմ տեղեկութիւններ է ժողովում հաստատելու, որ այդ փաստաթղթերը կեղծ են։

—Լաբինսկի բաժանմունքի կօզակների ատաման գնդապետ Սելինովսկին, իրան հասած այն տեղեկութիւնների հիման վրա, թէ ջարդ է սպասվում, մօտ օրերս հրատարակել է հետևեալ յայտարարութիւնը. «Ինձ հասած տեղեկութիւններից երևում է, որ «ռուս ժողովրդի միութիւնը կամ սև-հարիւրակայք» պատրաստութիւններ է տեսնում ջարդ սկսելու Արմաւիր գիւղում։ Յայտնում եմ ի գիտութիւն ամենքի, որ յանցաւորների դէմ, որ կուսակցութեան էլ պատկանելիս լինեն նրանք, ես ձեռք կառնեմ ամենախիստ միջոցներ»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

I

Կուլիբէկլուիզա, մարտի 20-ին

Աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին մանրամասն տեղեկութիւն տալ Նախիջևանի գաւառում տեղի ունեցած վերջին աղետալի անցքերի վերջաբանի մասին։

Այդ եղերական դէպքը արդէն որոշ չափով նկարագրված է «Մշակ»-ի № 52-ում՝ վերջին տեղեկութիւնների բաժնում։ Ինչպէս յայտնի է, Բաշ-Նորաշէն-Կուլի-Դիզայում երեք շուառթցի հայեր իրանց նորապսակ հարսով մի քանի թուրքերի վայրենութեանն են զոհ գնում, ուր երեք տղամարդիկ չարաչար տանջվելուց յետոյ, մահանում են, իսկ նորահարսի մասին մինչև այսօր ոչ մի տեղեկութիւն չը կար։ Սակայն հարսնացուի այլանդակված դիակը գտնվեց ամսի 16-ին, Նախիջևանից 10 վերստ դէպի հիւսիս-արևելք գտնվող թուրքական Սիրաւ գիւղում։

Այդ մասին ի միջի այլոց աւելորդ չենք համարում տալ մի քանի հետաքրքիր, թռուցիկ տեղեկութիւններ, հաւաքած թէ հայերից և թէ հայամէտ թուրքերից։

Նորահարս Մարիամը (ոմանց ասելով Թագուհի) Ղափանի Կալեր գիւղից է. մօտ 12 տարի առաջ, դեռ իր երեխայ ժամանակ Ներքին-Ագուլիսում դայեակութեան է ընդունվում մի ինչ որ հարուստ հայի կողմից, որն օրիորդին՝ նրա չափահաս դառնալուց յետոյ, որպէս խնամակալ հայր, ամուսնութեան է տալիս շուառթցի Մարութա Մկրտչեանին, սակայն անողորմ ճակատագիրը դժբախտ աղջկան դարհուրելի վախճան է տնօրինում եղել։

Անցեալ փետրվարի 22-ին, ճանապարհին՝ Ներքին-Ագուլիսից դէպի Շուառթ թուրքաց բարբարոսութեանը զոհ են գնում նորահարսի ամուսնացուն՝ դժբաղդ Մարութան, եղբայրը՝ Փօղոս Մկրտիչեանները և նրա քաւորը՝ Բոյլար Մահտեսի-Դաւթեանը. տանում են նորահարսի 300 ր. օժիտը, ոսկեղէնները և այլն, իսկ հարսնացուին թուրքերը ման են ածում գիւղից-գիւղ և յորդորում նրան ընդունել Իսլամը, սակայն թշուառ հարսնացուն յամառաբար մերժում է։ Այնուհետև դժբաղդ զոհին քաշ են տալիս (գիշերով, ի հարկէ) Նախիջևան, ներկայացնում են իրանց սէյիդներին, նրանց սուրբ բերանից դուրս թռած գովասանական բառերին արժանանալու համար։ Այդտեղ էլ թշուառին անթիւ չարչարանքներով և սպառնալիքներով ստիպում են թուրքանալ, բայց նա դարձեալ մերժում է։ (Գոնէ այդպէս են պատմում մեզ մի քանի հայասէր թուրքեր)։

Քաղաքում թշուառ զոհին պահում են մի քանի օր, բայց երբ տեսնում են, որ լուրեր են պտտում նրա այնտեղ լինելու մասին և պօլիցիան խիստ փնտրում է, բարւոք են համարում քաղաքից դուրս փախցնել։ Եւ մի յարմար գիշեր, մի սէյիդի առաջնորդութեամբ, թշուառ հարսնացուին՝ աչքերը կապած Նախիջևանից փախցնում են Սիրաւ գիւղը։ Գաւառապետ Դուդնիկովի անխոնջ ջանքերի շնորհիւ կալանաւորվում են չորս յայտնի դաշնակներ, որոնք այդ ոճրի գլխաւոր նախաձեռնողներն են եղել և որոնց վրա կառավարութեան երկիւղից ստիպված մատնացոյց է արել թուրք ժողովուրդը։ Այդ չորս չարագործները հետևեալ անձինք են, որոնք այժմ գտնվում են Նախիջևանի բանտում. Քէշիշլեցի Բեքթաշալու-Թէյմուր Մաշադի-Խուդաքերիմ-օղլի, նրա հօրեղբօր որդի՝ Իւնուս Հաջի-Խուդաբաղըշ-օղլի, Քիւլուսցի Հէյդար և Նորս-Մազրեցի Ջալիլ։ Այդ չորս դաշնակները իրանց կալանաւորման ժամանակ խոստովանել են, որ իրանք փախցրած հարսնացուին տարել են ու յանձնել սիրաւցի թուրքերին։

Գաւառապետն անմիջապէս գնում է Սիրաւ, ձերբակալում է 7 աչքի ընկնող թուրքերի և պահանջում սիրաւցիներից փախցրած հարսնացուին։ Թուրքերը բացասական պատասխան են տալիս (թէև ոչ կտրականապէս)։ Գաւառապետը Սիրաւից վերադառնում է Նախիջևան, բերելով իր հետ 7 ձերբակալված թուրքերին և բանտարկում է նրանց քաղաքի բանտում։ Այնուհետև նա, պարզ գիտակցելով, որ փախցրած հարսնացուն անպայման Սիրաւում պէտք է գտնվի, քաղաքից ուղարկում է այնտեղ մեզ բոլորիս յայտնի սիրելի շատանի չինովնիկ Բէուք-խանին, որ յորդորէ սիրաւցիներին, որպէս թուրքի, յետ տալ հարսնացուին։ Բէուք խանը գնում է Սիրաւ. զոհին իսկոյն ցոյց են տալիս խանին, բայց թուրքերը մտածելով, որ եթէ հարսնացուին կենդանի յանձնեն գաւառապետին, նա շատ մեծամեծ թուրքերի վրա մատնացոյց կանէ ու նրանց կառավարութեան ձեռքը կը մատնէ, հրամայում են սպանել նրան ու անհետացնել դիակը։ Սիրաւցիներն անմիջապէս կատարում են գազանային այդ հրէշաւոր հրամանը։ Մարտի 15-ին չարաչար տանջանքներով յօշոտում ու սպանում են այդ անբախտ արարածին, կտրում են ու պահում նրա ականջները, որպէս խորհրդանշան իրանց գործած սրբազան ու մեծ քաջութեան, և մերկացրած ու այլանդակված դիակը թաղում են դաշտում։

Բէուք-խանը վերադառնում է Նախիջևան և զեկուցանում է գաւառապետին, որ իբր թէ իրան Սիրաւում փախցրած հարսնացուի մասին դրական ոչինչ չասին, բայց նրա տեղը ցոյց կարող է տալ սիրաւցի 7 բանտարկեալներից մէկը, որի անունն է Միրալի։ Իսկ ինքը՝ նախ քան գաւառապետին այդ մասին յայտնելը, գաղտագողի գնում է բանտ և մատնացոյց անելով բանտարկեալ Միրալուն դիակի տեղի վրա, տրամադրում է նրան, որպէսզի, մեծ խանին հեռու պահելու համար այդ ծանր պատասխանատւութիւնից, այդ պարտականութիւն ինքը վերցնէ իր վրա։ Բանտարկեալ թուրքը իսկոյն եւեթ համաձայնում է և բանտապետի միջոցով յայտնում է գաւառապետին, որ եթէ իրան բանտից բաց թողնեն, նա երևան կը հանէ փախցրած ու պահած հայ նորահարսին։

Մարտի 16-ին, երեկոյեան, գաւառապետի կարգադրութեամբ առաջին գաւառամասի պրիստաւ Գավրիլով 7 սարաժնիկներով վերցնելով Միրալու առաջնորդութեամբ գնում է Սիրաւ, գտնում է դժբաղդ նորահարսի բոլորովին մերկ և այլանդակ դիակը և բերում հայկական Կուլիբէկլուիզա գիւղը ու դնում եկեղեցում։

Այդ բանն անմիջապէս նորից է յուզմունք առաջ բերում ամեն տեղ։ Թուրքերի ասելով, Սիրաւում մի թրքուհի մի կերպ ժամանակ է որսում և խեղճ նորահարսին ազատելով թուրք գազանների ձեռքից, գիւղից դուրս է հանում ու ցոյց տալով նրան հարևան հայ գիւղերը, միջոց է տալիս նրան փախչել, ազատվել, սակայն դժբախտ զոհը, երեք շաբաթվայ ընթացքում գերմարդկային տանջանքներ կրելուց ուժասպառ ու թուլացած լինելով, անզօր է գտնվում այդ ողորմած ժամին օգտվել բարի թրքուհու տուած ազատութիւնից և նորից է նետվում տանջանքների բովը, նզովելով իր սև ճակատագիրը, որը նրան իր ծաղկափթիթ կեանքի արշալոյսին այդպիսի եղեռնական վախճանի է հասցրնում։

II

Միւս օրը՝ ամսիս 17-ին, Նախիջևանից Կուլիբէկլուիզա ժամանեցին գաւառական բժիշկը և քննիչը սպանվածի դիակը անդամահատելու և սովորական արձանագրութիւնը կազմելու համար, որից յետոյ գիւղի կանայք, ներկայութեամբ քահանայի և տղամարդկանց, լուացին և լողացրին սպանվածի այլանդակ դիակը։ Մենք էլ ներկայ էինք այդ տխուր հանդիսին. դիակը պառկեցրած էր եկեղեցում սեղանի վրա։ Նրա կողքերը երեք տեղից ծակծկված էին գնդակներով, երկու տեղից էլ սրերով խոցոտված։ Սիրտը ողջ խոցոտված էր, գլխի գիսակները կիսով չափ փետտված էին և հանգոյցի ձևով կախված ծոծրակից։ Ինչպէս երևում էր, երեք շաբաթվայ աննկարագրելի տանջանքների ժամանակ դժբախտ զոհին գլխի ծամերից բռնելով են քաշ տուել, ով գիտէ ինչ տեսակ նոր ու աննման ճանապարհներով, որին որպէս ապացոյց կարող էր ծառայել նրա ոտների գուլպաների (носки) քրքրված լինելը։

Կուլիբէկլուիզեցիք վճռեցին հանգուցեալին կամքով, դիակին պատ. ելու համար պատան գնել, դագաղ շինել տալ, պատարագ մատուցանել, որպէսզի փառաւոր կերպով հոգին յանձնեն, բայց կուլիբէկլուիզեցի աչքի ընկնող հարուստ Նիկողայոս Օրդուբեանը վեհանձնօրէն յանձն առաւ այդ բոլորը իր հաշւով և բացի այդ՝ պատարագից յետոյ, բոլոր ժողովրդին իր տանը «մեռելի համար ժամի հաց տալ»։

Պատարագը սկսվեց ամսի 18-ին, կիրակի ժամի 12-ին։ Ներկայ էին բոլոր հարևան հայ գիւղերի մարդիկ, տղամարդիկ, թէ կանայք։ Նախիջևանից եկել էին մի քանի ցածր դասակարգի մարդիկ. աչքի էր ընկնում քաղաքի հարուստ կամ բարձր դասակարգի անտեղի բացակայութիւնը։

Պատարագին յաջորդեց բազմաթիւ կանանց միահամուռ ողբը, որոնց օրինակին հետևեց հարիւրաւոր տղամարդկանց ամբոխը։ Ուշագրաւ ու սրտաշարժ էր կանանց պլուտակային բայաթին, ուղղված նահատակ աղջկայ անդամանելի կորստեանը. ողբում էին նրանք անբախտ հարսնացուի սև ճակատագիրը, նրա երեք շաբաթվայ հոգեկան չարչարանքը, որի առաջ կը գունատվէր նոյնիսկ Մեծ Վարդապետի մի օրվայ չարչարանքը, որի անօրինակ ուժգնութիւնից իր խաչի վրա բացագանչեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ընթէր թողեր զիս…» Եւ անբախտ արարածն էլ արժանացաւ խորտակվող նորատունկ ծառի նման այլանդակ փտած դագաղի մէջ, թւում էր, թէ իր կրած խորը տառապանքների ու տանջանքների անօրինակ ուժգնութիւնից գերագոյն մի դատաստան է ուղղել անողորմ երկնքի դէմ և գերմարդկային ճիգերով լուռ բացականչում է Մեծ Վարդապետի նոյն հառաչանքի հակառակ ու վեհ բողոքը… Որպիսի հակայական հարուած անողորմ ճակատագրի։ Ինչ տեսակ երջանկութիւն էր սպասում նա, ինչ գեղեցիկ յոյսեր ու վարդագոյն երազներ էր փայփայում նա իր ջահել հոգում իր 19 տարեկան հասակում, մտնելիս ամուսնական կեանքի շէմքին, որոնք միանգամայն խորտակվեցան ու անդունդը նետվեցին իր սև ճակատագրի հետ միասին… Այո, տեսարանը խիստ անտանելի էր, հարիւրաւոր ամբոխը լալիս էր երեխայի նման և գիւղի անշուք եկեղեցին թրնդում էր այդ գերագոյն լացից… Ընդհանուր ցաւակցութիւնը կատարեալ էր։

Աննկարագրելի էր ամբոխի, մանաւանդ երիտասարդութեան յուզմունքն ու նրա կատաղի կրքերի բռնկումը։ Նա մռնչացող առիւծի նման պատրաստ էր այդ ժամին րոպէական ազդեցութեան տակ իր ուժեղ բազուկներով ջարդել ամեն ինչ, կամ ջարդվել, որպէսզի աշխարհում այդպիսի խայտառակ կեանք չունենայ…

Մարտի 19-ին Նախիջևանում հայերը խանութները փակում են և դիմում գաւառապետին, որպէսզի մեղաւոր թուրքերը անմիջապէս զինուորական դաշտային դատարանին յանձնվեն, հակառակ դէպքում հայ երիտասարդների վրէժխնդրութեան բորբոքված հակումները զսպել նրանք անզօր են հանդիսանում։ Գաւառապետը պատասխանում է, որ թող հայերը հանգիստ մնան, մեղաւորներն անմիջապէս մահվան կը դատապարտվեն և թուրքական այն գիւղերում, ուր այդ ոճրագործութիւնը կատարվել է, էկզեկուցիա կը նշանակվի, միայն թէ սպասում է գեներալ նահանգապետի կարգադրութեանը։ Պօլիցիայի կարգադրութեամբ պրիստաւները շարունակ շրջում են հայկական գիւղերը և յորդորներ են կարդում ժողովրդին՝ հանգիստ լինել ու չը պատասխանել թուրքերին, սպասելով բարձրից անելիք կարգադրութեանը։

G—ouny

նէր՝ բռնութիւններն ու անկարգութիւնները ճնշելու համար, չեմ զլանայ նոյնիսկ դիմելու զէնքի և զօրքի»: Այսօր փնտրտւմ Սեյինովսկին պաշտօնաթող է լինում: («Род. Зем.»)

Ցամաւ լուր է տարածվել, որ իր պատասխանատու հաշիւների համար արձակվում է ծառայութիւնից, Դոնեան զօրքի նակազնոյ ատաման և ծովակետ Սկրեգլովը (Սեվաստոպոլում):

ՊԵՏԱԿԱՆ ԲԻՒԴՋԷՏԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԴՈՒՄԱՅՈՒՄ

I

Հեռագիրը արդէն հաղորդեց այն երկար ու ձիգ, բայց և չափազանց կարևոր ու հետաքրքրական վիճաբանութիւնները, որ տեղի էին ունենում Պետական Դումայում մինիստրների ու պատգամաւորների միջև, պետական բիւդջէտի առիթով: Ինչպէս յայտնի է, օպոզիցիան հէնց սկզբից այն տակտիկան էր ընդունել, որ կառավարութեան հետ ժամանակից առաջ կօնֆլիկտներ չառաջացնելու համար, չը պէտք է մինիստրական դեկլարացիային պատասխանել և ուրիշ առիթներով նրա վրայ յարձակվել, այլ սպասելու է պետական բիւդջէտի քննութեանը, որ կառավարութեան ամենաթոյլ երակն է կազմում, և հէնց այդ ժամանակ նրա կոկորդից բռնելու է:

Եւ իսկապէս ներկայ կապիտալիստական դարում մանաւանդ, երբ ամէն ինչ դրամով է միայն կատարվում, և երբ առանց դրամի ոչինչ չէ կարող ոչ միայն պետութիւնը, այլ և առանձին անհատն էլ, բիւդջէտը ամենաառաջին և գլխաւոր տեղն է բռնում բոլոր պետութիւնների մէջ: Բացի դրանից, պետական բիւդջէտով շահագրգռված է ժողովրդի ամէն մի անհատը, որովհետև դա կազմվում է նրա գրպանից դուրս եկած կոպէկներով, ուստի և նա խիստ հետաքրքրված է, որ պետական հարկերն ու տուրքերը ժողովրդի վրա բաժանված լինեն արդարացի կերպով և որ այդ հաւաքված գումարները ծախսվեն չափազանց խնայողաբար և այնպիսի գործերի վրա, որոնք իրապէս ծառայում են երկրի ժողովրդի բարգաւաճմանը, ժողովրդի բարեկեցութեանն ու պաշտպանութեանը:

Ճիշտ է, ներկայումս, բուրժուազիայի տիրապետութեան օրով, ոչ մի երկրում դեռ ևս պետական տուրքերը այնպիսի արդարութեամբ չեն բաժանված ժողովրդի զանազան խաւերի վրա ու չեն ծախսվում այն եղանակով, որ ժողովրդի ընդհանրութիւնը հաւասարաչափ օգտված լինի. ճիշտ է ամէն տեղ էլ իշխող դասակարգը միշտ ամէն կերպ աշխատում է պետական ծախսերի ամենամեծ բեռը չունևորների և շահագործվող դասակարգերի վրա բարձել ու նրանց գրպանից դուրս քաշել պետութեան եկամուտների ամենամեծ բաժինը, իսկ ծախսեր անելու ժամանակ էլ կառավարչական մարմինները միշտ իշխող դասակարգի շահերն ու օգուտներն են աչքի առաջ ունենում, բայց և այնպէս Ռուսաստանի բիւրօկրատիան, ինչպէս յայտնի է, այդ անարդարութեան տեսակէտից ոչ մի տեղ իր նմանն ու հաւասարը չունի:

Ռուսաստանում միջին հաշւով ժողովրդի ամէն մի անհատ իր ընդհանուր տարեկան եկամուտների 20%-ը պետական զանազան տուրքերի ու հարկերի է վճարում: Այլ խօսքերով, իւրաքանչիւր 63 րուբլի եկամուտից ամէն մարդ 12 րուբլի 35 կոպ. պետական տուրք է վճարում, իսկ իր ապրուստը, գործերը վարելու, երկրի արդիւնագործութիւնը զարգացնելու և այլ կարիքների համար Ռուսաստանի բնակչին մնում է ընդամենը 50 րուբլի:

Առաջին անգամից այս թւանշանները, երևի, մի առանձին բան չեն կարող ասել մանաւանդ այնպիսի անձնաւորութիւններին, որոնք տարեկան գէթ մի քանի հարիւր րուբլի փող են վաստակում: Բայց դժբախտութիւնն էլ հէնց նրանումն է, որ Ռուսաստանում տարեկան մի քանի հարիւրներ վաստակողների թիւը չափազանց սահմանափակ է: Հարուստ դասակարգերը, ի հարկէ, տարեկան ոչ թէ հարիւրներ, այլ և հազարներ ու միլիօններ էլ են վաստակում, բայց գիւղացիութիւնը, որ Ռուսաստանի բնակչութեան ահագին մեծամասնութիւնն է կազմում, միջին թւով տարեկան եկամուտ է ստանում... 32 րուբլի: Լաւ ուշադրութիւն դարձրէք. այդ հաշիւը դարձեալ միջին թւով է: Բայց չէ՞ որ գիւղացիներն էլ համահաւասար կարողութեան տէր չեն. նրանց մէջ կան մեծ և փոքր հողաբաժիններ ունեցող, և, ինչպէս ասում է «Товарищъ» թերթը, որից մենք քաղում ենք այս բոլոր ստատիստիքական տեղեկութիւնները, սակաւահող գիւղացիները հողագործութեամբ պարապող ամբողջ գիւղացիութեան 50% են կազմում: Իսկ այդպիսիների տարեկան եկամուտը 15—20 րուբլուց չէ անցնում:

Ահա այդ ողորմելի եկամուտներից է, որ գիւղացին 20%-ը պետական տուրք պիտի վճարի, իսկ մնացածով պիտի ապրի, իր հողագործութիւնը պիտի զարգացնի, հողը պիտի պարարտացնի, երկրագործական կատարելագործված գործիքներ պիտի ձեռք բերի, լաւ տեսակի անասուններ պիտի առնի, իր զաւակները պիտի կրթի, և այլն, և այլն,

Ծաղր չէ՞ միթէ:

Բայց այդ դեռ ուղղակի հարկերն են, իսկ մի՞թէ չը գիտէ, որ Ռուսաստանում անուղղակի հարկերը (շաքար, ակցիզ, գինի և այլն) շատ աւելի մեծ տեղ են բռնում, և իրանց ամբողջ ծանրութեամբ գլխաւորաբար ժողովրդի ստորին խաւերի վրա ընկնում:

Այս բոլորից յետոյ, ինչ զարմանալու բան կայ, որ Ռուսաստանի ժողովուրդը տարիների ընթացքում չքաւորական սովի է մատնված և վիրաւոր առիւծի նման չքաւորութեան ճիչ է արձակում:

Այդ բոլորը մեր պետական բիւջէտի դեռ մի կողմն է, այն է տուրքերի բաժանման և եկամուտների բաժինը: Իսկ երբ նայենք նրա ելքի բաժինը, այսինքն, թէ ո՞ւր են գնում և ինչպէս են ծախսվում քաղցած ժողովրդից «քաւութեամբ» դուրս քաշած կոպէկներով գոյացած միլիարդները, այն ժամանակ պատկերը աւելի սոսկալի է դառնում: Այդ խնդիր էր, ի հարկէ, եթէ ժողովրդից հաւաքած գումարները գոնէ կիսով չափ ժողովրդի բարեկեցութեան, երկրի բարգաւաճման ու նրա էական և հրատապ կարիքների վրա ծախսվէին: Բայց մի՞թէ չը գիտէ, թէ ո՞ւր են գնում Ռուսաստանի պետական եկամուտները: Բիւրօկրատիան, իբրև հեռու տեղից եկած մի օտար աւազակ, շատ լաւ հասկանալով, որ ինքը մի ժամանակաւոր պարազիտ է միայն, լոկ իր շուտափոյթ հարստանալու և երկիրը լաւ-մաքուր կողոպտելու մասին է մտածում: Իր ամբողջ ուշքն ու միտքը՝ իր գոյութիւնն ու դիրքը կարելի եղածին չափ աւելի երկար պահպանելու մասին լինելով, նա իր բիւդջէտի ծախսերն էլ ճիշտ իր այդ նպատակի ու ձգտումների համաձայն է դասաւորում:

Բիւրօկրատիայի բոլորովին հոգը չէ, թէ իր գիշատիչ քաղաքականութեամբ քայքայվում է երկրի ամբողջ տնտեսութիւնը, թէ քաղցից ու սովից կոտորվում է ժողովուրդը, թէ օրէցօր աւելի ու աւելի ծանր պարտքերի տակ է ընկնում և հետզհետէ սնանկութեան է մօտենում երկիրն ու պետութիւնը: Իբրև մի գիշատիչ պարազիտ, նրա համար այդ բոլորը ոչինչ են, միայն թէ ինքը երկար ապրի և շարունակ կաղիններ ունենայ:

Ահա հէնց այդ ահեղ գիշատիչ քաղաքականութիւնը քննելու օրվան էր պահել Պետական Դուման իր անխիղճ յարձակումները, որպէսզի նախ՝ անողոք մերկացումներով ժողովրդի ամենախաւար մասսաներին էլ ցոյց տայ բիւրօկրատիայի ամբողջ քաղաքականութեան ու կառավարչական սիստեմի ծայրահեղ փտտութիւնը, և ապա՝ փող չը տալու սպառնալիքի տակ ստիպել կառավարութեանը գէթ մի քանի էական զիջումներ անել ժողովրդին:

Ռ. Աղաս

«ԻՎԱՆ — ՄԱՇԱԴԻ-ՄՈՒՀԱՄՄԷԴ»

Նոր-Բայազէտ, մարտի 24-ին

Նոր-Բայազէտից 2 վերստ հեռու գտնվում է Ղուլալի հայկական գիւղը: Սրանից 10 տարի առաջ, այդ գիւղացի մի երիտասարդ, Իվան անունով, երբ կանչվում էր զինուորականութեան պարտաւորութիւններ կատարելու համար, անյայտացաւ գիւղից, խոյս տալով զինուորագրութիւնից: Չը նայելով, որ տեղական ոստիկանութիւնը հետամտում կամ ջանք էր անում նրան ձերբակալելու, բայց չէր աջողվում, քանի որ պատմում էին թէ նա Թուրքացել է, ընդունել իսլամութիւն, անցել է Տաճկաստան, գնացել է հաջ, այցելել է Մէքքէ և այլն: Եւ այդ պատմութիւնը սուտ չէր. տասն տարուց յետոյ ահա նա, Իվանը, Թուրքացած և կոչված «Մաշադի-Մուհամմէդ», վերջին ժամանակներս անցել էր մեր կողմերը և մտնելով Թուրք գիւղերը ապաստանել էր իր կրօնակիցների մօտ: Եւ ահա պօլիցիան իմանալով նրա տեղը, ձերբակալեց և քաղաք բերեց՝ ուղարկելու ուր հարկն է:

Բացի իսլամական կրօնը ընդունելուց, նա «Մաշադի-Մուհամմէդ»-ը ամուսնացել էր մի Թրքուհու հետ, որին անբաժան իր հետ ման էր ածում թէ քաղաքում և թէ իր «հին վաթանում» Ղուլալի գիւղում, որտեղ գիւղացիներից մի քանիսը նոյն իսկ նրան յարգում-մեծարում էին *): Նա ինքը նոյնպէս շատերին պատմում, ընծաներ էր նուիրում, գովելով միևնոյն ժամանակ իսլամութեան արժանիքը, թէ ինչպէս Թուրքերը նրան աջակցել են, նպաստամատոյց եղել իւրաքանչիւր քայլափոխում...

Գիւղացիներից շատերի կարծիքով, Իվանը Թուրքացել էր յատկապէս զինուորագրութիւնից խոյս տալու և ազատվելու համար...

Սակայն մի քանի շաբաթ սրանից առաջ, զինուորագրական ատեանը՝ «Իվան-Մաշադի-Մուհամմէդին» իր Թրքուհի կնոջ հետ միասին էտապով ուղարկեց Երևանի նահանգական զինուորական կառավարչի մօտ՝ պատշաճաւոր կարգադրութիւններն անելու համար, այն նկատառմամբ, որ հայ զինուորացու Իվանը դառել է «Մաշադի-Մուհամմէդ»...

Յ. Գ. Ինչպէս լսում ենք, Երևանի զինուորագրական վարչութիւնը բանտարկել է նրան իր կնոջ հետ միասին:

Որսորդ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ախալքալաք, մարտի 18-ին

Դերասանուհի Տ. Սիրանոյշը մեզ մօտ է: Ուրախ է Ախալքալաքի հայ հասարակութիւնը՝ չափազանց ուրախ: Տեղիս հայ ազգաբնակութիւնը երկու սեզոն պատկառելի բազմութեամբ գալիս է թատրոն. գնահատելով եկած դերասանական խմբի այս կարող ընկերութիւնը ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս՝ զգալու և գնահատելու տաղանդաւոր Սիրանոյշին և Աբելեանի խաղի գեղեցիկ յուզիչ տպաւորութիւնները...

Ամսիս 15-ին, վելօսիպեդիստների ժողովարանի դահլիճում կայացաւ տ. Սիրանոյշի առաջին ներկայացումը. խաղացին «Մեդէա»: Երեկ, ամսի 17-ին, դրվեց «Մայրական սիրտ», դրամա 4 արար., հեղ. Զուդերմանի: Երկու ներկայացումին էլ կանգնելու տեղ չը կար: Խօսքի վերջում, եթէ կարելի լինէր լսել հասարակութեան՝ «կեցցէ Սիրանոյշ», «կեցցէ Աբելեան» բացականչութիւնները և, բուռն ծափահարութիւնները, հազիւ թէ աջողվէր...

Այսօր երեկոյեան տեղի կունենայ 3-րդ ներկայացումը՝ «Զաւակ» դրամա 5 արար., թարգ. Սամարցեանի: Ցանկալի է, որ հայկական բեմի արժանաւոր դերասանական ընկերութեան այս խումբը, տար տեղումս մի քանի ներկայացումներ աւելի, քան խոստացել է...

Հ. Փալեանց

ՆՈՒԽՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ [1])

Անցեալ ուսումնական տարին մի կերպ փակելով, հոգաբարձութիւնն ու յաջորդը իրանց միմեանց գործունէութիւնը «խօսքի» վերածելով՝ անշուշտ միմիայն հետևեալ «մենուներին» պէտք է յանգէին՝ 1) Նոյեմբերին սկսած և համարեա թէ մինչև ապրիլ քարշ տուած դպրոցների «պոչատ-գլխատ» տարի. 2) դպրոցների շինքին մի խոշոր գումար (3000 րուբլի). 3) ազգային դպրոցի նախկին փլատակ-խարխուլ շինութիւն. 4) հասարակութեան բանիմաց մասի հակակրութիւնը դէպի դպրոցական ղեկավարները և 5) «ի վերայ այսր ամենայն» նոր ուսուցչական մարմին ստեղծելու անհրաժեշտութիւնը:

Այն հոգաբարձութիւնը, որի անդամներին տարվայ ընթացքում այգետէրներից, մնացածի գործարանից ու խանութներից խիստ սակաւ էր յաջողվում «օրէնաւոր ժողովի» հրաւիրել, տարվայ վերջը շատ քնքոյշ ներդաշնակութեամբ կարողանում են անսպասելի ձևով գումարել և միաձայն վճռել՝—դիմել ժողովարարութեան Թիֆլիս-Բագու «յօգուտ տղայոց դպրոցի նոր շինութեան». երևի թէ այս սրամիտ մանեւրով կամենալով հասարակութեան աչքում բեկված վարկը փոքր ի շատէ վերականգնել. և մայիսեան մի գեղեցիկ առաւօտ քառաձի կառքը սլացնում է յաջորդին ու հոգաբարձուին դէպի Եւլախ կայարանը: Յաջորդը «գործերի անտանելի ծանրութեան տակ» քայքայված առողջութիւնը Թիֆլիսի ջերմուկներում բուժելու, հոգաբարձուն յաջորդի պաշտօնական ներկայացուցիչ և հոգևոր կառավարութեան անդամ քահանայի հետ Բագուի հարուստների «գրպաններին զարնելու»:

Թէև արդէն բազմիցս փորձված կրեատների քաղաքում Նուխու պատուիրակներին չը քաշվեցան ուղղակի յայտնել իրանց անվստահութիւնը ժողովելիք փողերի ճիշտ նպատակին գործադրվելու վերաբերմամբ, բայց և այնպէս Նուխու յաջորդի ներկայացուցիչ հայ հոգևորականին չը վիրաւորեցին և հանգստացրին մի կլորիկ գումար, որի գործադրութիւնը, ցաւ ի սիրտ, արդարացրեց բաղդակցների կասկածը, քանի որ տղայոց դպրոցի աւերակները մնացին նոյնը և երևի թէ ներկայ հոգաբարձութեան հետ երկար կը մնան «աւերակ». սակայն այդ և առհասարակ դպրոցի լիզուլեան դրամարկղի մասին յօդուածիս վերջում, առայժմ այսչափը միայն, որ յաջորդի ու հոգաբարձուի Նուխուց մեկնելով, քաղաքում դպրոցական «սկանդալների» մասին սկսում են քիչ խօսել, սպասելով հոգաբարձութեան խոստացած հրաժարականին:

Անցնում են ամիսներ. իր միակ հզօրաւութիւն դպրոցների խղճուկ վիճակով վրդովված, բայց մասցի, ակար և թոյլ Նուխու հասարակութիւնը դարձեալ բաղխում է հայոց յաջորդի դուռը, այս անգամ արդէն քիչ ցասման շեշտով: Քանի մի թեթև ու անաջող ժողովներից յետոյ, կազմուած վարչապետը վերջապէս յուլիսի սկզբներին պաշտօնական թղթով և ստորագրութեամբ մի մեծ ժողովի է հրաւիրում քաղաքի բոլոր «երևելիներին» դպրոցական գործի հանգոյցը լուծելու և մասսաղ աւերակը փուղոցի ճիրաններից ազատելու:

Որոշված օրը օրէնորդաց դպրոցի ընդարձակ դահլիճը ծայրէ ի ծայր լցված են քաղաքի բոլոր «նշանաւորներով», ամենքն էլ սրտանց ցանկանալով վճռական նոր ձեռքով վերջ տալ անպատեհութիւնների երկար շարքին, կատարելով նոր հոգաբարձական ընտրութիւն, հայթհայթելով դպրոցների համար ապահով նիւթական աղբիւրներ: Տիրած մեծաւորին լռութիւնը ընդհատվում է հոգաբարձական «աղմուկ և հաւատարիմ ծառայ» քարտուղարի ազդարարութեամբ՝ «հայր սուրբը ժողովի գալ չի կարող, որովհետև հիւանդ է»:

«Հրդեհ կայ, փախէք» աղաղակի տպաւորութիւնը թողած այս յայտարարութիւնից վիրաւորված՝ «ուղերը» անմիջապէս թողնում են դահլիճը և այլևս ոչ այլայլված քարտուղարի զովացուցիչ գաղեօրը» թէ՝— «պարոններ, ինչո՞ւ էք գնում», սպասեցէք, ինչ անենք յաջորդը չը կայ, հէնց իմանանք մեր վարչապետը մենակ է, մի՞թէ դուք ժողով չէք անելու» և ոչ էլ հոգաբարձութեան անդամի սրա նրա ականջին փսփսոցը՝ «ես հաստատ գիտեմ մարդը հիւանդ է, հէնց ուզում էք պարզն ասեմ, մարդու փորը վեր է ընկել», չը կարողացան հեղեղի առաջն առնել, և ահա դղրդոցով մի ժամում ամենքը ցրվեցան... Մայիսին Թիֆլիսում ապաքինված, յուլիսին նորէն ակարացած յաջորդը, էջմիածնի կենտ. ժող. Նուխու պատգամաւորի վրա հասած ընտրութեան իր նեղարկերը խնայելով, շտապով մեկնում է գաւառիս գուցեբրական վիլլա Վարդաշէն գիւղը, թողնելով քաղաքի «գործերը տակը—տակ, գլուխը—գլուխ» և դպրոցական տարվայ շէմքին անգիտակար միացած հոգաբարձութիւնը, միանգամայն անընդունակ ուսուցիչ հրաւիրելու գործում (քանի որ ուսուցիչ ասված արարածը ոչ «Սամուէլի սպրանք է» և ոչ «Ցինգէլի չիթ»), նոր ուսուցչական խումբ կազմելը այս անգամ գրութեամբ յանձնում է Թիֆլիսում մի միջնորդի, որ երկար չը սպասեցնելով նրանց, անմիջապէս պատասխանում է թէ Տէր-Աբրահամեանցը համաձայն է գալ Նուխի ուսուցչ. Սակայն միջնորդի այս հեռագրի ազդանունը հոգաբարձութեան առաջ դնում է մի գլխացաւ: Դեռ ևս ամառը, Նուխու դպրոցի ուսուցչութեան մասին հոգաբարձութեան անունով եկած խնդիրքների շարքում կար նաև ձեմարանական Ա. Տէր-Աբրահամեանցի (այժմ «Աշխատաւոր» թերթի խմբագիր) Թիֆլիսից տուածը: Արդ՝ «որովհետև անցեալ տարի հոգաբարձութեան աչքում «փուչ» դարձած ասաք ուսուցիչը վարդաշէնցի էր, ուստի հոգաբարձութիւնը վճռում է մերժել Ա. Տէր-Աբրահամեանցին, քանի որ նա ևս վարդաշէնցի է. ահա թէ ինչո՞ւ Թիֆլիսից քաշված հեռագիրը շփոթում է հոգաբարձուներին՝ չը լինի թէ հեռագրի Տէր-Աբրահամեանցը նոյն վարդաշէնցին լինի և միջնորդի հեռագրին հետևում է հոգաբարձութեան հետևեալ սրամիտ պատասխանը՝ «եթէ Տէր-Աբրահամեանցը վարդաշէնցի չէ, համաձայն ենք»: Սրանից աւելի զօրաւոր կրիտերիում ասաք ուսուցչի ունենալիք արժանաւորութիւնների, ի հարկէ, մեր հոգաբարձութեան համար չէր կարող լինել...

Տեսնենք:

Իքս

*) Նրան մի շաբաթ ժամանակով պահ էին տուել իրանց գիւղում.

1) «Մշակ» № 57.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի: Նիստը բացվում է ժամը 11 և 11 րոպէին: Նախագահում է Գոլովինը: Քննելով կառավարութեան մտցրած մի շարք օրինագծերը, Դուման անցնում է նախահաշւի վիճաբանութիւններին: Մինիստրների օթեակում երևում է ֆինանսների մինիստրը:

Զուրաբեան, ս. դ. խօսում է պետական եկամուտները ժողովելու կարգի մասին, ընդգծելով, որ կառավարութիւնը ազգաբնակութիւնից աւելի է ստանում, քան նա կարող տալ, բացատրաբար է վերաբերվում գինու մենաշնորհութիւն մտցնելուն և պետական երկաթուղիների շահագործութեան կարգին: Շարունակելով նկարագրել պետական եկամուտների միացած աղբիւրները, եզրափակում է, որ ոչ թէ խառնակութիւնը սաստիկ ֆինանսների քայքայումը, այլ պետական քայքայված տնտեսութիւնը պատճառ դարձաւ խառնակութեան: Բանակռւէ է սկսում Ստրուվէի հետ, գտնելով որ սահմանադիր-ռամկավարները հրաժարվելով եկամտի վերաբերութեամբ սոցիալ-դեմօկրատների մերժողական բանաձևին միանալուց, քաղաքական խաղ են խաղում ժողովրդի հաշւում:

Մերժվում է հռետորների ցուցակագրումը դադարեցնելու առաջարկը:

Տանցեվ մատնանշում է, որ սոցիալիստների առաջարկի իրականացումը՝ թէ պէտք է մշտական զօրքը փոխարինել ժողովրդական միլիցիայով, իբրև ժամանակակից միջազգային դրութեան մէջ, երկար կը մնայ այն վտանգութեանը, որպիսին ժողովուրդը տածում է դէպի սոցիալիստական գաղափարները: Հռետորը համաձայն չէ սահմ.-ռամկ.-ների հետ, որ կարելի է մեծ չափով կրճատել զինուորական և ծովային վարչութիւնների նախահաշիւը. գտնում է, որ զօրքի բոլոր անխուսափելի կարիքները անպայման պէտք է բաւարարութիւն ստանան, նոյն իսկ այնպիսիները, որոնց վերաբերութեամբ եկամուտը շատ քիչ է խօսում: Զարմանում է զինուորական մինիստրի վրա, որը, սարսափելի պատերազմից յետոյ, չէ համարձակել եկամուտը աւելացնելու մասին. կառավարութիւնը պարտաւոր է ընթանալ զօրքի կարիքները բարելաւելու ճանապարհով, որպէսզի օֆիցերների՝ զօրքից դուրս գալու առաջն առնվի, որոնց թիւը ներկայումս հաշւվում է զօրքի մէջ 7%, որպէսզի զօրքը ապահովվի յուսալի, լաւ պատրաստված օֆիցերներով, որոնք կոչված են ռուս զինուորին վարժելու և կրթելու, սկսելով նրանց դժբաղդ դէպքերում ապահովագրութիւնից և վերջացնելով զինուորական կօշիկները լաւացնելով: Եթէ զօրքի անխուսափելի կարիքներին բաւարարութիւն չը տրվի 1907 թւի եկամտով, այն ժամանակ նրանք պէտք է անպայման պարզվին 1908 թ. նախահաշւում իրականացնելու համար:

Յանուն զօրքի, որ հանդիսանում է նոյնահասակ զինված ժողովուրդ, յանուն ժողովրդի, որ երկրորդ անգամ չէ կարող տանել զինուորական անաջողութիւնները, յանուն երիտասարդ դեռ չամրացած ժողովրդական ներկայացուցչութեան հաստատման, որի վրա, երբ նա սառն և անտարբեր վերաբերվի դէպի զօրքի կարիքները, և նոր զինուորական անաջողութիւնները, կարող է պայթել ժողովրդական ատելութիւնը, Տանցևը կոչ է անում Դումային ամէն ջանք և միջոց գործ դնել հոգալու զօրքի կարիքների մասին:

Մաքսուտով մահմեդականների անունից, նախահաշւի քննութիւնը ընդհանուր ժողովում անպատեհ համարելով, առաջարկում է եկամուտը անպայման յանձնել մասնաժողովի. ողջունում է Դումային, որ նախահաշիւը քննելու առաջին իսկ վայրկեանից նա մտաւ Ռուսաստանի համար նոր իսկական սահմանադրական կեանքի ասպարէզի մէջ:

Ֆեօդորով պնդում է, որ նախահաշիւը անպայման պէտք է յանձնել արդէն կազմված և աշխատանքի ձեռնարկած մասնաժողովին. համաձայնում է ֆինանսների մինիստրի հետ, որ նախահաշւի ըստ էութեան անպայման քննութիւնը մինչև նախահաշւի մասնաժողովի վճիռը — վաղաժամ է, ինչպէս և վաղաժամ է քննել եկամուտը միանգամայն հանգիստ, գործունեայ և օբյեկտիվ կերպով: Զարմանում է մի քանի հռետորների՝ իրան համար միանգամայն անհասկանալի՝ արտայայտած այն յոյսերի վրա թէ ֆինանսների մինիստրութիւնը Դումայի առաջ կը պարզէ կառավարութեան ներքին քաղաքականութեան ծրագիրը և պետական տնտեսութեան յետագայ գործունէութեան պլանը: Մինիստրութիւնը, որ կանգնած է երկու դարաշրջանների սահմանում, ճգնաժամի մօմենտում կարող է և պէտք է պարզ պատասխան տայ—թէ ինչպէս է նա իր պարտականութիւնները կատարում. պետական տնտեսութեան սիստեմի հարցի քննութիւնը յամենայն դէպս նրան չէ պատկանում: Մեր մինիստրութիւնը ժառանգութիւն ստացաւ պետական տնտեսութեան սիստեմը և երկար տարիներ շարունակ յաջորդող ֆինանսական սիստեմը: Նա իր ուսերի վրա է կրում այդ նախնական մեղքը, և սխալ կերպով նրա պարտականութիւնը դրվեց մի կարևոր վրա, որը վերջին երկու տարիների ընթացքում միայն հնարաւորութիւն ունեցաւ զբաղվել իրան յանձնված գործով: Ելևմտի քննութեան առաջիկայ գործը բնաւ նպատակ չունի երևան հանել պետական տնտեսութեան սիստեմի կամ նախահաշւի սիստեմի մէջ մեղաւոր անձանց, այլ նրա օբյեկտիւ քննութիւնն է, հեռու միանգամայն այն խնդրից՝ թէ ո՞վ է մեղաւոր, և ո՞վ—ոչ: Աւելին մեզ պէտք է սուղ անհրաժեշտ հիմունքներ տալ—անցկացնելու իրագործելի բարենորոգումների համար: Միշտ և հանապազ դէմ լինելով կառավարական խնամակալութեան՝ ժողովրդական և պետական կեանքի վերաբերութեամբ, անհետևողական է նոյն կառավարութիւնից պահանջել՝ պարզել և մէկիկ-մէկիկ նկարագրել պետական տնտեսութեան և ֆինանսական քաղաքականութեան ապագայ սիստեմը: Պետական Դուման պէտք է արդարացնէ պետական տնտեսութեան հիմնական կարիքները: Դումայի պարտքն է—բանալ բոլոր ժահրոտ խոցերը: Միայն այն ժամանակ, երբ այդ բոլորը կը կատարվի, գործադիր իշխանութիւնը կը յարմարվի ժողովրդի արդարացի ցանկութիւններին, կը լսէ այդ ցանկութիւնները և համապատասխան դրան կը փոխէ իր գործողութիւնները: Հրաժարվելով յատկացրված գումարների ըստ էութեան քննութիւնից, Ֆեօդորովը, անցնելով ժամանակակից եկամտի և նրա հետ շաղկապված ֆինանսական տնտեսութեան պետական մասի քննութեան, ասում է, որ ժողովրդի հարկատուութեան ընդունակութիւնը յոգնել է, ժամանակ է խնայել ծախքերից, մինչև որ պետական եկամտի և ժողովրդի կարողութեան միջև կանոնաւոր յարաբերութիւն հաստատվի: Ի նկատի առնելով, որ ահագին գումարներ են ծախսվում ազգային բարենորոգման, ժողովրդական կրթութեան և այլ ստեղծագործիչ բարենորոգումների համար, անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել երկրի ստեղծագործիչ ոյժերի ամենաառանդուն ստեղծման վրա: Մանրամասն կանգ առնելով թէյի, շաքարի, լուցկու, նաւթի վրա դրած հարկերի վրա, հռետորը այդ հարկերը արգելառիթ հարկեր է անուանում, անհրաժեշտ է համարում դէմ ելնել նրանց իր եռանդի, մտքի ամբողջ թափով, որովհետև անուղղակի հարկերի կրճատման ճանապարհով կարելի է հասնել սպառողութեան զարգացմանը և հեռացնել պետական գանձարանի համար վտանգաւոր կորուստները: Ողջունելով մինիստրների խորհրդի նախագահի ցուցմունքը՝ թէ կառավարութիւնը մտադիր է պետական ծախքերի մի մասը յատկացնել տեղական տնտեսութեան կարիքների համար, հռետորը գտնում է, որ կենտրոնի և շրջագծի միջև ոյժերի բաշխումը պէտք է կատարվի այդ խօսքի ամենաընդարձակ իմաստով:

Անցնելով ժողովրդական միջոցների անտնտես ծախսելու խնդրին, Ֆեօդորովը անհրաժեշտ է համարում յարակցել, որ այդ անտնտեսութիւնը ընկած է ոչ ժամանակակից մինիստրութեան պատասխանատւութեան վրա, որովհետև իւրաքանչիւր մինիստր իբրև ժառանգութիւն ստանում է ահագին ծախքեր, որոնց պէտք է բաւարարութիւն տրվի և որոնք նրան պարտաւորեցնում են՝ դիմել որոշ քաղաքականութեան. Ներկայ դէպքում ժողովրդի շահերի հետ միասին ծախսվող մեր անտնտեսութիւնը կայանում է, ի հարկէ, ոչ անցեալ Նիստերում խօսած անհնարատակայութեան ծախքերի, և ոչ էլ զանցառութիւնների մէջ, քանի որ զանցառութիւններ լինում են ամենուրեք և ամէն պետական վերակազմութեան ժամանակ. երբեմն հոմերոսական չափերի հասնում են նրանք և հանրապետական երկիրներում և սահմանադրական և միապետական երկիրներում. անտնտեսութիւնը ներփակվում է պետական տնտեսութեան համաչափութեան բացակայութեան, զանազան մինիստրների պարզ քաղաքականութեան մէջ, մինիստրներ, որոնք յաճախ մինչև վերջին ժամանակներս հետամուտ էին տարաձայն և հակամիտ շահերի: Մինիստրների խորհրդում, մինիստրների համերաշխութեան սկզբունքը հռետորի կարծիքով առայժմ գոյութիւն ունի միայն գաղափարով. դեռ մօտիկ անցեալում առանձին մինիստրների գործողութեան անհամաձայնութիւնը շատ մեծ վնասներ էր հասցնում: Խօսելով, ռազմական պատերազմում, երկաթուղային գործում և մատակարարական գործողութեան մէջ ցոյց տուած անտնտեսութեան մասին, հռետորը հերթին է գնում ոչ մի պաշտպանութիւն չունեցող սպառողների հարցը: Երկրի տնտեսական շահերը ֆինանսական քաղաքականութեանը ենթարկելու մէջ հռետորը տեսնում է մի խոշոր սխալ, որ անխուսափելիօրէն անցանկալի հետևանքների հետ է կապված: Ֆինանսների վարչութեան շահերը շուրջ փաթաթված են՝ մշտապէս պահպանելու խնայողական հաշուեկշիռը (բալանս), ուստի խրախուսանքի են արժանանում արտահանման ամէն տեսակ միջոցները, որոնք սուղ առաջ են բերում ոյժերի ջլատում, գների անհաւասարաչափ աճում և սպառողների շահերի խախտում: Պետական տնտեսութեան պայմանների փոփոխութիւնը ժողովրդական ներկայացուցչութիւնից ահագին ստեղծագործական աշխատանք է պահանջում, որի համար հարկաւոր են հանգստութիւն և խաղաղութիւն. չէ կարելի հանգիստ կերպով աշխատել—Դուման ցրելու անպատասխանատու սպառնալիքների մէջ: «Դուման ցրել» ամօթալի խօսքը պէտք է դուրս նետվի ժողովրդական բառարանից, ես ասում, որ կառավարութիւնը Դուման արձակելու լեգալ իրաւունք ունի: Դումայական մարմնի աշխատանքի երկրորդ դրական հանդիսանում է թէ ներքին և թէ արտաքին երկարատև խաղաղութիւնը, որը յարգում և պահպանում է ոչ միայն մեր իրաւունքը և արժանապատւութիւնը, այլ և ուրիշ ժողովուրդների իրաւունքները, եթէ նոյն իսկ նրանք շատ թոյլ են պաշտպանված: Այդպիսով խաղաղութեան հասնելու պէտք է ուղղվեն մեր ամենաեռանդուն ջանքերը (կենտրոնում ծափահարութիւն).

Ժամը 1 և 55 րոպէին յայտարարվում է միջարար:

Ժամը 3 և 6 րոպէին նիստը վերսկսվում է. Մինիստրների օթեակում են ֆինանսների, արդարադատութեան և առևտրի մինիստրները.

Ալյաշեվը գտնում է, որ Դուման իրաւունք չունի քննել և հաստատել նախահաշիւը:

Կուզմինսկին գտնում է, որ վիճաբանութիւնները սխալ հայեացք սփռեցին Դումայի նպատակի վրա, որովհետև Դումայի նպատակն է ոչ թէ թւանշանները քննադատել, այլ մշակել նոր եկամտի շրջանակներ: Մի շարք օրինակներ բերելով, գտնում է, որ Դուման ձգտելով երևան հանել իր ստեղծագործիչ գործունէութիւնը, պարտաւոր է ոչ միայն ընդունել պետական եկամուտը, որը ոչ մի վնաս չէ հասցնում համապետական շահերի ընթացքին, այլ և յանձնելով նրան մասնաժողովի քննութեան, ընդունել հերթական գործերի անցնելու բանաձևը—մի քանի ցանկութիւններ յայտնելով նախահաշւի հարցի նկատմամբ. վերջացնում է իր ճառը հաւատալով, որ ռուս ժողովուրդը միայն այն ժամանակ կարող է արդարացնել Դումայի գոյութիւնը, երբ նա ընդարձակ չափերով երևան կը հանէ իր ստեղծագործական գործունէութիւնը: Այդ բարձր և վսեմ խնդրի առաջ են կանգնած այժմ ժողովրդական ներկայացուցիչները. այդ նպատակի իրագործման ճանապարհը. հակի ճանապարհը, «հողը կը վերցնենք», մեզ աղաղակող սպառնալիքների ճանապարհը չէ բնաւ, այլ խաղաղ, բարեկամական, կուլտուրական և Դումայի և ժողովրդի ու պետական գործիչների միասնական աշխատակցութեան ճանապարհն է:

Ընդունվում է հռետորների խօսելու ժամանակը 10 րոպէով սահմանափակելու առաջարկը:

Տէր-Աւետիքեանը քննադատութեան ենթարկելով ծախքերի առանձին յօդուածները, հնարաւոր է գտնում՝ վերացնել դեսպանների և դեսպանական կիրառութիւնների պաշտօնները, իսկ նրանց վրա ծախսվող փողերը յատկացնել ժողովրդական կրթութեան վրա. զարմանք է յայտնում, թէ ինչու Դուման չէ քննում այն հարիւր հազարները, որոնք ծախսվում են ձեռնարկող(?) պահպանելու և լուսաւորելու համար. անհրաժեշտ է համարում նախահաշիւը ամբողջովին մերժել:

Կուսպենսկին գտնում է, որ սոցիալ-դեմօկրատները Դումային դրած շրջանակներից շատ դուրս գնացին. հասկանալի են նրանց՝ երկիրը յեղափոխականացնելու ջանքերը, սակայն երկիրը այդ չէ կամենում. Նրան հարկաւոր է ստեղծագործիչ, և ոչ կործանիչ, աշխատանք: Ռուսական նախահաշիւը կախված է փոխատւութեան վարկից, բայց այդ բարոմետրը շատ զգայուն է և պահանջում է քաղաքացիներից հայրենասիրութեան զգացմունք, որպիսին մենք չը տեսանք, երբ ռուս մարդիկ գնացին Վիբօրգ վարկաբեկելու ռուսական վարկը: Վիբօրգի կոչը, որին ես չեմ կարող անուանել այլ կերպ, բայց եթէ կեղտոտ թուղթ, իր նպատակին չը հասաւ: (Աղմուկ):

Նախագահ.—«Այդ նախահաշւին չէ վերաբերում»:

Կուսպենսկին շարունակում է. «վիճելով ինչ որ 6000 րուբլի գումարի մասին, մենք մոռանում ենք, որ մեր քառասնօրեայ այստեղ գտնվելը գանձարանին նստում է 300,000 ր»:

Նախագահ.—Դուք կարող էք առարկել Դումայի առանձին անդամներին, բայց չէք կարող նկատողութիւն անել ամբողջ Դումային:

Ցոյց տալով մի քանի թւանշաններ, որոնք պէտք է կրճատել, Կուսպենսկին տաս րոպէն անցնելուց յետոյ յայտնում է, որ նա իր ճառը ուրիշների նման առակներով և հեքեաթներով չի վերջացնելու, բայց չէ կարող չասել որ նրան թւում է, թէ Դումայի անդամները գտնվում են խրճիթում, հաւերի ոտքերի վրա:

Կելեպովսկին գտնում է, որ ձախակողմեանների ճառերը շատ քիչ բան ասացին նախահաշւի մասին, որովհետև այդ դիմադրողների գլխաւոր նպատակն է պաշտպանել երկրի խռովութիւնը և անիշխանութիւնը:

Նախագահ.—Խնդրում եմ նկատողութիւններ չանել:

Կելեպովսկին շարունակում է. «Անիշխանութիւնը և խռովութիւնը—անհրաժեշտ միջավայր է նրա համար, որպէսզի կարելի լինի ձրիակերութիւն անել (паразитировать) խաբված բանւորական ժողովրդի հաշւին (ծիծաղ և աղաղակներ, «կորչի»):

Նախագահը կանգնեցնում է հռետորին:

Կելեպովսկին անցնելով նախահաշւին, գտնում է, որ Կուտլերը չէ քննել եկամուտը ըստ էութեան, իսկ քարը նետեց մինիստրական բանջարանոցը, իսկ գործնական մասում Կուտլերը թեւեց սոսկ ֆինանսական իրաւունքի գաղափարը:

Ֆինանսների մինիստրի ճառը.—Առաջադրված վիճաբանութիւնները և Պետական Դումայի առաջիկայ որոշումը թէ ինչ ուղղութիւն աւելի նպատակայարմար կը լինէր տալ 1907 թւի բիւջէտի քննութեանը, դրդում են ինձ մի քանի, կարծում եմ, ոչ այնքան աւելորդ դիտողութիւններ անելու: Պարտքս եմ համարում նախապէս նախազգուշացնելու, որ ես լռութեան կը տամ այն բոլոր նկատողութիւնները, նոյն իսկ կասեմ յարձակումները, որոնք ուղղված կը լինեն անձնականապէս իմ դէմ: Բացատրաբար վերաբերվեցի ես այստեղ արված այն նկատողութեանը՝ թէ կառավարութեան իւրացրած ներկայ հարկային սիստեմը քամում է ժողովրդի վերջին կոպէկը: Ահա այդ նկատողութեան վերաբերմամբ ես բացատրական կարծիք յայտնեցի, այլ ոչ ժողովրդական կոպէկի: Ի զուր ինձ մեղադրեցին մի այնպիսի տեսակէտի համար, որը ես իսկապէս չեմ ունեցել և, ի հարկէ, չեմ էլ ունենայ, եթէ ես որևէ առնչութիւն կունենամ հայրենիքի ֆինանսների հետ: Իրաւացի կերպով այս դահլիճում նկատեցին, որ խօսել, օրինակ բերելով գինեվաճառութեան մենաշնորհը, որպէս խմիչքեղէնից տուրք հաւաքելու միջոց, այդ տեսակ միջոցով վերջին կոպէկը քամելու մասին, ասել թէ ժողովրդի տնտեսական վիճակը ահագին վնաս է կրում այն հանգամանքի շնորհիւ, թէ ամբողջ հարկային սիստեմը հիմնված է այն ուղղութեան վրա՝ թէ կառավարութիւնը նպատակ է դրել ժողովրդին հարբեցնել միայն, ինչպէս այդ բոլորը կարելի է ասել, բայց հարկաւոր է ասել որոշ չափով զգուշութեամբ: Այստեղ արդէն ուշադրութիւն դարձրեցին և մատնացոյց արին, այն է, իմ բացակայութեան միջոցին, որ ռուս ժողովուրդը, որպէս խմիչքեղէն սպառող, այնքան էլ շատ հարկ չէ վճարում, ինչպէս այդ թւում է, ռուս ժողովուրդը հարբեցութեան և ալկոհոլեան խմիչքների գործածութեան համար դրամ այնքան շատ չէ վատնում, ինչքան վատնում են ուրիշ երկիրներ, սակայն դժբաղդաբար, նա վատնում է, և վատնում է այնպիսի պայմաններում, որոնք անդամալուծում են նրա հարստութիւնը: Այդ բոլորը վնասակար է, բայց ոչ այն պատճառով, որ գոյութիւն ունի եկամուտների գանձման այս կամ այն սիստեմը, որի գոյութիւնը շատ վաղ ժամանակներից է և դրա պատճառները գտնվում են այնպիսի խոր պայմաններում, որոնց փոխել կամ յեղաշրջել հարկերի գանձման այս կամ այն սիստեմի օգնութեամբ, վեր է մարդկութեան ոյժերից: Մասնաւոր նկատողութիւններից երկրորդը, որին ես չեմ կարող չը պատասխանել, և որը իմ կարծիքով նոյնիսկ նշանակութիւն ունի բիւջէտական մասնաժողովի աշխատանքների համար և այն էլ ոչ երկրորդական նշանակութիւն, վերաբերում է վիճաբանութիւնների դեռևս սկզբում ինձ տուած հարցին, այն է. պետական նախահաշւի դասաւորութեան խնդրին: Դումայի անդամ Կուտլերը մատնանշեց, որ անհասկանալի է այն կարգը, որով լուծված է այդ հարցը, անյայտ են այն հիմունքները՝ թէ օրէնքի ո՞ր յօդուածի հիման վրա է կազմված պետական նախահաշիւը, 87-րդի, թէ՞ մի ուրիշի հիման վրա. դասաւորութեան հարցի տեսակէտից նա մատնանշեց, որ յայտնի չէ թէ ինչ կարգով և ինչպիսի պայմաններով կարելի է ուղղել կամ փոփոխել այդ դասաւորութիւնը: Այդ հարցը, եթէ չեմ սխալվում, շօշափեց Դումայի անդամ Ստրուվէն: Բայց անցեալ ուրբաթ օրը այդ հարցը այստեղ բոլորովին այլ ուղղութիւն ստացաւ քննելու և լուսաբանելու ժամանակ, որը արտայայտվեց ուրիշ հռետորներից, եթէ չեմ սխալվում, աշխատաւոր խմբակի ներկայացուցիչներից մէկի: Հարցը նոյնիսկ աւելի հեռու գնաց քան այն պատասխանը, որ անցեալ ուրբաթ ես տուի Կուտլերին, իբրև մի անձի, որի կոմպետենտութիւնը ինձ համար կասկածից դուրս է, որին տուած պատասխանս ես գեղեցիկ էի համառօտ համարատուութեան ձևի մէջ: Այդ կողմից ամբողջ մե-

դաւորութիւնը ծանրանում է իմ վրա, որովհետև ես չափազանց համառօտ կերպով պատասխանեցի. ես չը տուեցի այն պատասխանը, որ ինձ համար աւելորդ էր թւում, բայց որը այժմ ինձ թւում է որ հարկաւոր է: Այդ պատասխանը խիստ կերպով իմ դէմ ուղղվեց, նոյնիսկ առիթ տուեց բացարձակ կերպով յայտնել Պետական Դումային, որ մինիստրը Դումայի առջև տալիս է այնպիսի բացատրութիւններ, որոնք միանգամայն չեն համապատասխանում իր գրածներին, որ նա թոյլ է տալիս անդամների առաջ այնպիսի բացատրութիւններ տալ, որոնց հարկաւոր չէ հաւատալ: Ես թոյլ կը տամ մատնացոյց անել այդ բանի վրա, որպէսզի ապացուցած լինեմ ասածս: Որպէսզի յիշողութիւնս ինձ չը դաւաճանէ, ես կարող եմ նոյնիսկ կարդալ այնտեղ, որին վերաբերում է իմ առարկութիւնը, այն է, որ մարտի 23-ի նիստի ստենոգրաֆիական արձանագրութեան մէջ մենք կարդում ենք հետևեալը. «Նա, այսինքն ֆինանսների մինիստրը, մեզ համար բոլորովին զարմանալի կերպով պատասխանեց, որ այդ դասաւորութիւնը նոյն իսկ չը պէտք է սահմանվի օրէնսդրական ճանապարհով»: Մանրամասն ստուգութիւնից յետոյ պարզվեց, որ այդ յայտարարութիւնը բոլորովին չէ համապատասխանում իրականութեանը, այսինքն, ուրիշ խօսքերով ասած՝ ֆինանսների մինիստրը սուտ ասաց: Ինձ տուած այն հարցին, թէ օրէնքի ո՞ր յօդուածի հիման վրա է հաստատված պետական ծախքերի բաժանման դասաւորութիւնը, իսկ դա չափազանց կարևոր է,—պետական ծախքերը 400, 500 կամ աւելի թւով համարների բաժանելը,—ես պատասխանեցի հետևեալը. դասաւորութեան հարցը արդարև շատ էական ու կարևոր խնդիր է, որովհետև գոյութիւն ունեցող օրէնքները անմիջական կախումն ունեն դասաւորութիւնից և պետական ծախքերի բաժանումից էլ կախված է այդ ծախքերի գործադրութեան կարգը. որքան շատ կը լինեն պարագրաֆները, այնքան էլ սահմանափակ կը լինի այն գործադրութեան իրաւունքը, որ այդ շրջանակների սահմաններում օրէնքը վերապահում է գործադիր իշխանութեանը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղազախ, մարտի 7-ին

Կարդացինք «Մշակ» լրագրում Դաւթեան ժառանգների կտակի մասին, իրանց հայրենիքում հիմնելու մի գիւղատնտեսական ուսումնարան ի յիշատակ Ե. Դաւթեանի, որը մեծ ուրախութիւն պատճառեց բոլոր ղազախեցիներիս:

Բայց կայ մի հանգամանք, որը տարաձայնութիւնների պատճառ է դարձել. դա հետևեալն է.—Քարվանսարեցիք կամենում են, որ ուսումնարանը լինի իրանց գիւղում, իսկ Սև-Քարում, իսկ բարեգործի հայրենակիցները Սոր գիւղացիք, կազմել են մի խնդրագիր, իրանց մօտի մի քանի գիւղերի հետ, հանգուցեալի եղբօր անունով, և կամենում են, որ ուսումնարանը լինի Սոր գիւղում: Աչքի առաջ ունենալով ուսումնարանի կենտրոնականութիւնը և անհրաժեշտութիւնը մեր Ղազախ գաւառի ապագայ սերնդի համար, ցանկալի է, որ Դաւթեանի ժառանգները և միւս ձեռնհաս ղեկավար անձինք ընտրէին մի պատգամաւորութիւն չեզոք մարդկանցից, որոնք և անձամբ շրջէին Ուզուն-Թալայից-Դիլիջան և մինչև հողը (վերջինս Կարսի գծից 6 վերստ), ծանօթանալով գիւղերի դիրքին, օդին, ջրին, ժողովրդի վարքին, հայլն: Մենք շեշտում ենք մանաւանդ օդը, որովհետև սոսա ժամանակ աշակերտները պիտի պահպանվեն գործնական փորձերով, ուստի և անհրաժեշտ է այնպիսի տեղ ընտրել, որը ուսումնարանի կառուցման համար բոլոր վերոյիշեալ պահանջներին համապատասխան լինի: Սրանով վերջ կը դրվեր բոլոր տարաձայնութիւններին և անէկդոտներին, իսկ ամեն մի գիւղ, ուր կը կառուցվի ուսումնարանը, ուրախութեամբ կը յատկացնի հարկաւոր հողը:

Մօտիկ ծանօթ լինելով Քարվանսարա գիւղին, վստահ կերպով կասեմ, որ այդ գիւղը ամենաանյարմար տեղն է:

Ղազախեցի

—

Ախալքալաք գիւղ, մարտի 28-ին

Խնդրում ենք, ձեր թերթի միջոցով թոյլ տաք մեզ մեր խորին շնորհակալութիւնը յայտնել մեր գիւղի բարձր արժանապատիւ Տէր-Յովհաննէս աւագ-քահանայ Տէր-Գալստեանցին, որը բարեհաճեց կանօնաւոր կտակով—(հաստատված Թիֆլիսում Նիկոլայեվ նոտարի կանտորում) նուիրել մեր գիւղի եկեղեցիներին մեր չքաւոր դպրոցի պահպանութեան համար իր անշարժ կալուածքները՝ երկու տուն (մեկը ուսումնարանի համար) և մի պարտէզ: Նրա այս կալուածքը արժէ մօտաւորապէս քսան հազար րուբլի և կարող է տարեկան օգուտ բերել 500—600 րուբլի: Այս միևնոյն Տէր-Գալստեան հայրը և իր եղբայր Գալուստը իրանց սեփական գետնի վրա 1891—92 թ. կառուցին և մի եկեղեցի ծախսելով 30—35 հազար րուբլի: Փառք և պատիւ արժանաւոր հովուին:

Եկեղ. ծխական հոգաբարձուներ՝
Փիրան Փիրալեան, Գասպար Մամածեան, Ալէքսան Դանդուրեան.

—

Թիֆլիս, մարտի 27-ին

Ի նպաստ Կովկասի հայ արկածեալց ստացել եմ սոյն մարտի ընթացքում ս. Էջմիածնի Սինոդից 33 ր. 21 կ.: Կոմսուհի Վարվառէ Դուրդոնիա Վարանցով-Դաշկովայի միջնորդութեամբ Զանգեզուրի արկածեալց օգտին 727 ր.: Կալկաթայից Պետ. Յակովբջանեանի և Կարապետ քահ. Թոռմիկեանցի գրութեամբ 75 ֆունտ ստեռլինգ: Սոյն գումարները յանձնել եմ Կենտրոնական Նպաստամատոյց յանձնաժողովի գանձապահ Ալէքսանդր Մելիք-Աղաբեանցին: Արդ՝ պատիւ ունիմ խնդրել խմբագրութիւնից բարեհաճել «Մշակ» օրագրիդ մերձակայ համարներից մեկում տպագրել երկտողս, ի գիտութիւն պ. պ. նուիրատուների:

Առաջնորդ Հայոց Վրաստանի և Իմերեթի՝
Գարեգին արքեպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքային ուղարկված է այն գրքերի, բրօշիւրների և այլ հրատարակութիւնների ցուցակը, որոնք արգելված են դատաստանական որոշումներով:

—

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն հարցրել է արական միջնակարգ դպրոցների կառավարիչներին ճշգրիտ կերպով կատարելու համար, որ այն անձինք, որոնք ներկայ տարվայ գարնանը ցանկանում են կողմնակի անձերի հետ քննութիւն տալ, որպէս դասատուն դասընթացքը աւարտելու վկայական ձեռք բերելու համար, պէտք է քննութեան ենթարկվեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից հաստատված ծրագրով:

—

Այսօր, երեկոյեան, քաղաքային խորհրդի դահլիճում կը կայանայ ձայնաւորների և հրաւիրված անձերի նիստը՝ քննելու կարևոր հասարակական նշանակութիւն ունեցող մի հարց—կազմակերպել կովկասցի սովեալներին օգնութեան հասնելու գործը:

—

Երէկ առաւօտվանից սկսած խուզարկութիւններ են կատարվել քաղաքի համարեա բոլոր մասերում: Ձերբակալվածներ շատ կան:

—

Ստացանք Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան 1905-1906 թ. ուսումնական տարեշրջանի տեղեկագիրը և հաշուեցոյցը, որից երևում է, որ մի տարվայ ընթացքում (1905 թ. յուլիսի 1-ից մինչև 1906 թ. յուլիսի 30-ը) մուտք եղել է 42641 ղրան 80 եւ 38,634 ղրան 85:

—

Թիֆլիսի նահանգապետը նորից դիմել է քաղաքային վարչութեանը, խնդրելով ուղարկել իրան 1907 թ. ելեմուտի նախահաշիւը:

—

Քաղաքային վարչութիւնը մերժել է Կովկասի թանգարանի վերատեսչի այն խնդիրքը, որով վերջինս խնդրել էր քաղաքի կենտրօնում մի հողաբաժին տալ յիշեալ թանգարանի համար նախատեսված նոր շինութիւն կառուցանելու համար, որովհետև քաղաքի մատնանշած մասում ազատ հողաբաժիններ չը կայ և պատրաստականութիւն յայտնեց, որ եթէ ներկայումս պետական հիմնարկութիւններից մէկը կը համաձայնվի տեղափոխվել քաղաքի ծայրը, այդ դէպքում ազատ հողաբաժինը թանգարանին կը յատկացնվի:

—

Թիֆլիսի գաւառի Օրջոնիկի գիւղի լիազօրները դիմել են Թիֆլիսի գաւառապետին, խնդրելով տալ իրանց տասը հրացան ամբողջ գիւղին, ինքնապաշտպանութեան նպատակով: («Т. Л.»)

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը Պետերբուրգում ապրիլին գումարվող Ջրանցքային համագումարից նամակ է ստացել, որով հրաւիրում են ուղարկել իր ներկայացուցչին: Քաղաքային վարչութիւնը մտադիր է ուղարկել այնտեղ իբրև իր ներկայացուցիչ քաղաքային Ջրանցքի կառավարիչ ինժ. Կուրդիանիին: («Зак.»)

—

Կովկասի Փոխարքայի խորհուրդը աւարտեց Անդրկովկասեան երկրի ներկայ տարվայ զեմստվային նախահաշիւը: («К.»)

—

«Грузинская Мысль» լրագրի խմբագիր-հրատարակիչ Գ. Բ. Գվազավային թոյլատրված է վերադառնալ Թիֆլիս:

—

Գօրու քաղաքային լիազօրների ժողովի միջնորդութիւնը, որով խնդրում էին թոյլատրել բանալ Գօրիում արական պրօգիմնազիա, Թիֆլիսի նահանգապետը ներկայացրել է Փոխարքային իր եզրակացութեամբ, որով ցանկութիւն է յայտնում բաւարարութիւն տալ այդ խնդրին:

—

Ապրիլի վերջերին Կովկաս է սպասվում ձկնորսութեան և ձկնաբուծութեան տեսուչ Օ. Ա. Գրիմմը, ձկների հարստութիւնը շահագործութեան աւելի բանաւոր ձև տալու համար, Արևելեան Անդրկովկասում և Կասպիական րայօնում:

—

Գործադուլ ինտելիգենտները, որոնք Թիֆլիսի քաղաքային վարչութեան կողմից ընդունված էին ընտանիքների ցուցակները կազմելու գործը վարելու համար, մարտի 26-ին երեկոյեան, երբ նրանց բաժանվեց աշխատանքը, յայտնեցին, որ նրանք չեն կարող աշխատել վարչութեան պայմաններով $2^1/_2$ կոպ. բլանկը արտագրելու համար, և պահանջ ներկայացրին տալ նրանց մի ժամ աշխատելու համար 50 կոպէկ: Գործեր կառավարողը յայտնեց, որ գնի որոշումը վարչութիւնից է կախված, որին կը յանձնէ նրանց պահանջը: Այդ պատճառով գործադուլները, ոչինչ չը շինելով, ցրվեցին իրանց տները: («К.»)

—

Ալէքսանդրապոլի բնակիչ երդ. հաւատ. Օ. Ա. Բուդաղեանը խնդրել է թոյլ տալ իրան հրատարակել հայերէն լրագիր «Ժայռ» անունով:

—

Մարտի 24-ին, Չիաթուրայում, այն սարից, ուր գտնվում է արդիւնաբերական հիւանդանոցը, լսվեցին հրացանաձգութեան ձայներ: Պրիստաւ Մախարաձէին այդ ժամանակամիջոցին ուղեկցող պահապանները սկսեցին անկանոն կերպով կրակել ատրճանակներից, որը տևեց մօտ 10 րոպէ: Բանուորները, կառապանները և ժողովուրդը, չիմանալով հրացանաձգութեան պատճառները, վախեցան և իւրաքանչիւրը, աշխատելով խուսափել վտանգից, վազում էր, առանց յետ նայելու: Գոմէշներ և եզներ լծած սայլերը, առանց սայլապանի մնալով, ընթանում էին սարսափելի արագութեամբ—մի խօսքով բաբելոնեան աշտարակաշինութիւն կատարվեց: Հրացանաձգութիւնը սկսեց քիչ-քիչ դադարել, հասարակութիւնը սթափվեց և վերջիվերջոյ 2 բոլորովին անմեղ մարդիկ ծանր կերպով վիրաւորվել էին տեղի ունեցած հրացանաձգութիւնից: Հրացանաձգութեան իսկական պատճառները յայտնի չեն, բայց ենթադրում են, որ չարագործները պրիստաւ Մախարաձէի կեանքի դէմ մահափորձ են կատարել և այդպիսով տեղական ազգաբնակութեանը սարսափելի դրութեան մէջ են դրել: Վիրաւորվածներին տարան հիւանդանոց, ուր նրանց բժշկական օգնութիւն հասցրվեց:

—

Բագուի նահանգական վարչութեան օրագրական որոշմամբ միջնորդութիւն է յարուցված Կովկասի Փոխարքայի առաջ, որով խնդրըվում է զեմստվային պահեստի գումարից յատկացնել 59,000 րուբլի Սալեանի մզկիթը վերանորոգելու համար:

—

Խաղաղ-վերածնութեան կուսակցութեան անդամ Մ. Ա. Ստախովիչը անցել է անկուսակցականների շարքը: («Зак.»)

—

Երբ Րոդիչեվի առաջարկութեամբ ամբողջ Պետական Դուման ոտքի կանգնեց հանգուցեալ Իօլլոսի յիշատակը յարգելու համար, չը վերկացաւ միայն մէկ անդամը—Կրուշեվանը:

—

Գլխաւոր հեռագրատանը ցենզուրա հաստատեցին պատգամաւորների անունով ուղարկված հեռագիրների համար: («З.»)

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մարտի լոյս 27-ի գիշերը Տումանովի փողոցում բնակվող Իվան Խաչատուրովի խանութը մտել են անյայտ չարագործներ և գողացել են մօտ 500 րուբլու զանազան ապրանքներ:

—

Մարտի 26-ին երեկոյեան ժամը 9-ին Անիսեվսկի փողոցում բնակվող Բոստախաշվիլիի բնակարանը մտել են 9 անյայտ անձեր և սպառնալով ատրճանակով, խլել են 66 րուբլի փող և որից յետոյ անյայտացել են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ, 25 մարտի

Բերթլօյի մահը

St. Michel ծառուղիի ձախ թևի վրա, լայն և զարիվեր Rue Soufflot-ի բարձրութեան վրա, կանգնած է մի տաճար: Ընդարձակ է նա և հսկայ, գեղեցիկ և շքեղ, փառահեղ և արտիստիկ:

Օտարականը, որը չէ վարժված, յանկարծ մի այդպիսի տեսարան տեսնելով, զարմանում է և սքանչանում: Բայց երբ զարմանքի և սքանչացման զգացումները տեղի են տալիս հետաքրքրութեան, նա անդադար հարցնում է ինքն իրան, արդեօք ինչ տաճար է այս:

Մօտենում է շէնքին և կարդում է նրա ճակատի վրա գրված հետևեալ նախադասութիւնը.

«Aux grands hommes la patrie reconnassante».
(Մեծ մարդկանց՝ երախտապարտ Հայրենիքը):

Ի՞նչ գեղեցիկ նախադասութիւն, որքան երախտագէտ և ներդաշնակ խօսքեր, որքան բարձր և վեհ մարդկային գաղափար: Եւ նա կրկնում է անդադար այդ բառերը, ամեն անգամ աւելի և աւելի սքանչանում:

Եւ երբ նա տեղեկանում է, որ դա Panthéon է, որ այդտեղ են Ֆրանսիայի փառքը և պարծանքը, Ֆրանսիայի և մարդկութեան մեծ հանճարները՝ այն ժամանակ նա դեռ աւելի սքանչանում է, այդ տաճարի, բառերի և մեծ հանճարների մէջ եղած գաղափարական ներդաշնակութեան վրա:

Այո, դա Panthéon-ն է, որի ոտքերի տակ, ընդարձակ հօրիզոնի մէջ շրջապատված է Պարիզը: Այդ տաճարի մէջ են, տաճար երախտագիտութեան, գաղափարի և մարդկութեան, տաճար սիրոյ և յարգանքի, գիտութեան, ճշմարտութեան և գեղեցկութեան, և ոչ թէ կրօնքի, քրիստոնէութեան, կամ անհիմն կաթօլիկութեան:

Այդտեղ են Ֆրանսիայի մեծ հանճարները, այնտեղ են Միրաբօյի, Դէկարտի, Մօնտէսքիէօյի, Վօլտէրի, Ռուսսօյի, Բիւֆօնի, Կիւվիէի, Գամբէտտայի, Հիւգօյի, Պաստերի և այլ անձանց մարմինները:

Rue Soufflot-ի ծայրում, որի հանգիստ և լայն զարիվերը, որը կարծես շինված է իբրև անմահութեան ճանապարհ՝ մշուշով շրջապատված այսօր, հազիւ երևում էր Panthéon-ը, հագած սուգի տխուր և սև հագուստները: Տասնեակ հազարաւոր բազմութիւն լուռ և տխուր տաճարի առջև բարձրացած կատաֆալկը, որի գագաթի վրա կողք-կողքի քնած էին յաւիտենական անմահ քնով Բերթլօն և իր կինը: Հանդիսին ներկայ էին հազարաւոր զօրքեր, դեսպաններ, պատգամաւորներ, ամբողջ մինիստրները և ինքը նախագահը:

Ամեն մարդ լսած է արդէն Բերթլօյի մահը: Մարտի 19 էր, երբ սիրած կնոջ մահից մի քանի վայրկեան յետոյ, սրտի ցաւից վախճանվեց և ինքը:

Բերթլօյի գլխաւոր աշխատութիւնները քիմիայի մէջ, գործարանական բաղադրութիւնների քիմիական միջոցներով պատրաստելն է. ինչ որ իրանից առաջ անկարելի էր թւում, երբ դեռ կարծում էին թէ մի անթափանցելի պատնէշ բաժանում է հանքաբանական և գործարանական քիմիաները, և որ կարծում էին թէ անկարելի է մէկից միւսը անցնել՝ այսինքն անկարելի հանքային մարմիններով, օրինակ՝ ածխածին, ջրածին և թթուածին. պատրաստել՝ ստեղծել գործարանական նիւթեր, ինչպէս շաքարային և ալքօօլային մարմիններ:

Թէպէտև Բերթլօյի գլուխը թոյլ չի տալ դեռ ևս մարդկութեան ստեղծելու կեանքը, բայց նա թոյլ է տալիս ստեղծելու այն ամեն բան, ինչ որ Բերթէլօյից առաջ կարծում էին թէ միայն կեանքը կարող է ստեղծել:

Եւ դա արդէն չափազանց մեծ քայլ է գիտութեան և ընդհանուր մարդկութեան համար:

Անմոռանալի են Բերթլօյի միւս բազմաթիւ քիմիական օրէնքները և գիւտերը, որոնք այնքան մեծ օգուտ են տուած համաշխարհային ինդուստրիային:

Բերթլօն նաև մեծ փիլիսոփայ էր և եղել է արտաքին գործերի մինիստր:

Ա. Օհանեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 մարտի

ՄԱԴՐԻԴ, 26 մարտի: Էդուարդ թագաւորը նշանակված է սպանիական պատուաւոր զօրահրամանատար: Այդ բանը մեկնաբանում են, իբրև երկու ազգերի անկեղծ բարեկամութեան ապացոյց:

ԱԹԷՆՔ, 26 մարտի: Ժամանեց և ցնծագին ընդունվեց իտալական թագաւորը: Նա տեսակցեց Գէօրգի թագաւորի հետ:

ԿԱՐԹԱԳԷՆ, 26 մարտի: Ժամանեց Էդուարդ թագաւորը: Ալֆօնս թագաւորը նրան դիմաւորելու գնաց «Հէրալդօ» կայսերական զբօսանաւով:

ԼՕԶ, 26 մարտի: Կուսակցական հողի վրա կատարվող սպանութիւնները շարունակվում են: Երեկոյեան քաղաքի զանազան մասերում սպանվել են երեք բանւոր՝ մահացու վիրաւորվել են ութ հոգի: Վերջին օրերս վիրաւորվածներից շատերը մեռնում են հիւանդանոցներում:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 27 մարտի: Հրդեհը ոչնչացրեց քաղաքը լուսաւորող ելեքտրական կայարանը, որի պատերի փլատակների տակ սպանվեցին եօթ հրդեհաշէջներ:

ԲԵԼԳՐԱԴ, 27 մարտի: Սկուպչինայի նըստաշրջանը երկու ամսով հանգիստ առաւ: Սերբիայի հարաւ-արևելեան մասում գետերը դուրս են եկել իրանց ափերից: Երկաթուղային երթևեկութիւնը լինում է ընդհատումներով:

ԿԱԶԱՆ, 27 մարտի: Համալսարանի ուսանողների ընդհանուր ժողովում, քննելով Մոսկվայի համալսարանում կատարված դէպքերը, որոշվել է մերժել գործադուլը: Ժողովը խնդրում է պրօֆէսօրների խորհրդին հաւասարեցնել նախկին սեմինարիստների իրաւունքները գիմնազիաւարտների իրաւունքների հետ, թոյլատրելով սեմինարիստներին անարգել մէկ ֆակուլտետից անցնել միւսը:

ԵԼԻՍԱՒԵՏՊՈԼ, 27 մարտի: Օդեսայի դատաստանական պալատի դատախազին պատուիրագրված է լուրջ միջոցներ ձեռք առնել և քննել ու երևան հանել ռուս ժողովրդի դաշնակցութեան անդամ Պրօխորօվի վերջերս կատարած սպանութեան հանգամանքները:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) մեզասեռ. հ.:
Կ. Մ. ՋԻԿԻՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերաբուժութիւն:
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկաւաւ.:
Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան:
Վճարը 50 կ.: չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 130—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 44—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
95—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ս. Զաևեանի
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
II ԳՐԱԿ
Դիմել՝ գրավաճառներին
5—5

ՅԱՐԳԵԼԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻՆ
Յօգուտ գիտութեան և միջազգային գրականութեան խնդրում եմ հեղինակներին և խմբագիրներին 1907 թիւից սկսած ուղարկել ինձ մի օրինակ իրանց այն գրքերից և թերթերից, որոնց մէջ զետեղված կը լինեն դպրոցական շէնքի, աշակերտների, ուսուցիչների առողջապահութեան, ուսուցման և մեթօդների մասին գրուածքներ, լինեն թարգմանութիւն, լինեն հեղինակութիւն:
Ցանկացողներին տարվայ վերջում կը վճարեմ իրանց ուղարկածների արժէքը, համաձայն իրանց հաշուեցուցակի: Խնդրում եմ նոյն կերպով ուղարկել յաջորդ տարիներում ևս լոյս տեսած այդ կարգի հրատարակութիւնները: Արժէքը չը պահանջողներին կուղարկեմ «Դպրոցական Առողջապահութեան Միջազգային եռամսեայ Արխիվը», որի մէջ զետեղված կը լինի իրանց հրատարակութեանց գրախօսականը և որի կազմութեան համար անում եմ իմ այս դիմումը:
Դոկտ. Կ. Փաշայեան
Հասցէս է՝ D-r Paschayan-Khan, Bender-Guez, Via Bakou.
(հ. կ. կ.) 2—3

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում			
Փոստատար	1 ժամ	24 ր.	ցերեկվայ
Մարդատար	8 »	5 »	առաւօտեան
»	11 »	8 »	գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու			
Մարդատար	9 ժամ	13 ր.	առաւօտ.
Փոստատար	7 »	48 »	երեկոյեան
Մարդ-ապրանք.	11 »	38 »	»
Թիֆլիսից դէպի Երևան			
Փոստատար	12 ժամ	40 ր.	գիշերվայ

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
եւ
ՊՕԷՄԱՆԵՐ
Գիրք երկրորդ
Գինն է 40 կոպ.
Դիմել՝ հայ գրավաճառներին կամ Ալէքսանդրապոլ՝ հեղինակին:
6—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Պրօֆեսսօր Կ. Թումանեանի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅ
ԵՒ
ԱՌԱՋՆՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
676 էջերէ բաղկացեալ այս գործը Արևելեա և Հայկական խնդրոց ամփոփ մէկ պատմութիւնը կուտայ: Կը պարունակէ շատ մը հայերուս համար շահեկան պաշտօնաթղթեր, միջազգային դաշինքներու մէջ անցած Հայոց նպաստաւոր յօդուածներ, և 1895-ին Հայկական վեց գաւառներու համար եղած Բարեկարգութեանց Ծրագիրը:
Այս կարևոր նիւթը դիւրահասկանալի ոճով և պարզ կերպով հայ հասարակութեան ներկայացնել եղած է հեղինակին ջանքը և նպատակը:
Գործը բաժնուած է 2 հատորներու, որոնք թէև թղթակազմ, բայց հաստատուն կարուած ըլլալով դիմացկուն են և կրկին կազմելու պէտք չունին:
Կողքին 2 կողմը դրուած են Իզմիրլեան Ս. Պատրիարքին և հեղինակին պատկերները:
ԳԻՆՆ Է ՓՈՍՏԻ ԾԱԽՔՈՎ 2 Ր.
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ» Г. Галустяну.
4—3

Լոյս տեսաւ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
գիրքը. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ:
ԳԻՆՆ Է 25 ԿՕՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.: 2) Քաջ Աղասի 25 կ.: 3) Ժամանակը ոսկի 40 կ.: 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.: 5) Սասունցի Յօհան 30 կ.: 6) Երկասիրութիւններ 50 կ.: 7) Գալօ աֆօ, Խաչան 12 կ.: 8) Աստուած չը ճանաչող 10 կ.: Շէն թագաւորի աղջիկ 25 կ.: 11) Երկու աղբերացեղ 30 կ.: 12) Հեքեաթներ 30 կ.: 13) Անեծա աշխարհ 8 կ.: 14) Աստուած աղքատի կերպաւ 20 կոպէկ:
Մեծ գումարով գնողները դիմելու են Քամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց:
(ե. հ. կ.) 5—20

„ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽԱՆԴ"
64 երես, 20 կոպէկ
Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին և հեղինակին. Թիֆլիս 5 уч. Об. ул. № 6 Бен. Тер-Григорлну.
1—1

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է, որ դպրոցում էկզամեններ քննութիւնը և այլ արտակարգ քննութիւններ (զանազան դասարանների վկայականներ ձեռք բերելու համար)
Լինելու են մայիսի 2-ից մինչև 20-ը
2—2

Ղզլարի յաջորդութեան 120 տուն Ղաբաջալու գիւղի համար հարկաւոր է մէկ քահանայացու, կամ քահանայ, միջնակարգ կրթութեամբ, որ բացի քահանայագործութիւնից, պէտք է կառավարի նաև ծխական միդասեան դպրոցը և դասաւանդէ. ցանկացողներին խնդրում ենք դիմել Чрезъ Кизляръ сел. Карабагло Терск. обл. Кизл. отдѣленіе, Армянскому Попечительству.
2—3

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը,

պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի ապրիլի 1-ին առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է արտակարգ ընդհանուր ժողով:

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Հանգուցեալ Յովհաննէս Խուդադեանցի ընկերութեան կտակած քարվանսարայի շինութեան հարցը:
2) Որբանոցի տիպի և ծրագրի հարցը:
3) Չքաւորներին օգնող թաղական խորհրդների հարցը:
4) Ընթացիկ հարցեր:
(ե. հ. կ.) 2—3

Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
լոյս տեսաւ
պատկերազարդ, եռամսեայ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
1907 թ. № 1. (XV գիրք)
Բովանդակութիւն. Հայ ժողովրդական վէպը՝ Մ. Աբեղեան. Համմուրաբիի օրէնսգիրքը Լ. Բաբայեանի. Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի՝ Կ. Կոստանեանի. Հայոց ժառանգական իրաւունքը՝ Խ. Սամուէլեանի. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ (առանձնապէս Զուարթնոց եկեղեցին) Մեսրովբ վարդապետ. Նախիջևանի ոստիկանական շրջան՝ Ե. Լալայեանի. Նոր-Բայազէտի գաւառ (շարունակելի) Ե. Լալայեանի: Մի դրոշմ. Մատենախօսութիւն. Քաղուածք հայոց Ազգագրական ընկերութեան արձանագրութիւններից:
Գիրքը զարդարված է 25 պատկերներով
Տարեկան բաժանորդագինն է 5 ր., մի գիրքը 1 50 կ. № 2 լոյս կը տեսնի մայիսին:
Դիմել՝ Въ редакцію журнала «Азгагракань андесъ», Тифлисъ. 9—10

Բացված է բաժանորդագրութիւն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելի յաւելուած» անուան տակ:
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»: 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն: 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին): 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.: 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը:
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր:
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.: Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.: Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի:
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՕՊԷԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրեմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն եւ 3) Խաղաղութիւն
Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները: Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրեմիա № 4—ԳԵՐԻՆԵՐ և զատկական պրեմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.:
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրեմիաները առանձին արժեն հատը 50 կոպէկ: Մեծադիր գունաւոր նկար պրեմիան 3 րուբլի:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»: Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը:
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէջեան
(եր. հինգշ. և շաբ.) 43—10

„ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ"
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Ձեռնարկ մայրերի եւ դաստիարակչուհիների համար
ՆՕՏԱՆԵՐՈՎ ԵՒ ՆԿԱՐՆԵՐՈՎ
ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ
Ուսուցչուհիներին և ուսուցիչներին՝ 1 ր. 80 կ.
Տասն օրինակից աւել գնող գաւառական գրավաճառներին մեծ զիջում:
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Михайловская ул. № 138: օրմէջ 6—10

Տպարան «Հ Ե Ր Մ Է Ս» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852